

ԼԱԻՐՈՎ «ՊԷՏԶ ԶԷ ԲԱՂԱՔԱԿԱՆԱՅՆԵԼ ՍՈՒՐԻՈՅ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԾ ՄԱՐԿԱՍԻՐԱԿԱՆ ՕԺԱՆՊԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅԸԸ»

Դուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով Մոսկուայի մէջ ռուսական դիւանագիտութեան շուրջ տեղի ունեցած խորհրդաժողովին անդրադարձաւ սուրիական թղթածրարին ըստ լուրի: «Սուրիոյ ժողովուրդին վրայ ԱՄՆ-ի եւ արեւմուտքի կողմէ բանեցուած տնտեսական պատժամիջոցները անբացատրելի տագնապի մատնած է բնակչութիւնը:



Սա մարդկայնօրէն ընդունելի չէ, անմիջապէս պէտք է կասեցնել պատժամիջոցները»:

Շար.՝ Էջ 8 >

ՇՆՈՐՀԱԽՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱԼԵՊԻ ԳԼԽԱԽՐ ՀԻՒՊԱՏՈՍՈՒԹԵԱՆ

Երեքշաբթի, 17 Յունուար 2023-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի տօներուն առիթներով շնորհաւորական այցելութիւն տուաւ ԶԶ Զալէպի Գլխաւոր Զիւլպատոսութիւն, ընկերակցութեամբ Զոգշ. Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեանի եւ Ազգային Վարչութեան ատենապետ մեթր Սունայուլ Սունայուլեանի:



Սրբազան հայրը ջերմապէս դիմաւորուեցաւ ԶԶ Զալէպի Գլխաւոր հիւլպատոսութեան խորհրդական-հիւլպատոս Բաբգէն Պատալեանի, հիւլպատոսութեան խորհրդական Դաւիթ Թադէսեանի եւ ԶԶ մարդասիրական առաքելութեան խումբի ղեկավար գնդապետ Արկադի Տոնոյեանի կողմէ:

Մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով բարեմաղթութիւններ փոխանակուեցան: Ի տես ընդհանրապէս աշխարհն ու տարածաշրջանը յուզող պայմաններուն եւ մասնաւորապէս Զայաստանի եւ մանաւանդ Արցախի վրայ ծանրացող մարտահրաւերներուն, անդրադարձ կատարուեցաւ արցախահայրութեան

Շար.՝ Էջ 8 >

ՀԱՅ ԵՐԵՔ ՀԱՍԱՅՆՔԱՊԵՏՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Չորեքշաբթի, 11 Յունուար 2023-ի առաւօտուն, Բերիոյ Զայոց Թեմի Բարեչան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի հիւրընկալութեամբ, հայ երեք համայնքապետներ՝ Առաջնորդ Սրբազան Զայրը, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Զայոց Առաջնորդ Արի. Տ. Պետրոս Արք. Միրիաթեան եւ Սուրիոյ Զայ Աւետարանական Զամայնքի Պետ Վեր. Դոկտ. Յարութիւն Սելիմեան, Ազգ. Առաջնորդարանէն ներս հանդիպում ունեցան:



Եղբայրական եւ սիրոյ ջերմ մըթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին, համայնքապետները քննարկեցին ընդհանրապէս եկեղեցական կեանքը եւ մեր գաղութը յուզող հարցեր, մասնաւորապէս «Զայ Ծերանոց»-ին եւ «Արեւիկ» կեդրոնին վերաբերող խնդիրներ:

Զամայնքապետները անդրադարձան նաեւ աղօթքի շաբթուան այս տարուան եկեղեցական արարողութեան, որ ի մօտոյ կը ծանուցուի մեր ժողովուրդի գաւակներուն, ինչպէս նաեւ յառաջիկայի ազգային-եկեղեցական տօներուն կապուած համատեղ ծրագրաւորումներուն եւ աշխատանքներուն մասին:

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԶԱՐԶԱԶՐՈՅՑԸ CILICIA TV-ԻՆ ԶԵՏ

«ՄԵՐ ԱԶԳԻՆ ՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՏԱԳՆԱՊԵՏՐԸ ՊԷՏԶ Ե ՄԻԱՏՆԱԲԱՐ ԴԻՄԱԳՐԱԿԵՆՔ»*

ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Զայաստանի, Արցախի եւ Սփիւռքի մասին խօսիլը սովորական երեւոյթ մը չէ ու պէտք է ըլլայ: Եռամիութիւնը այսօր, անելի քան երբեք, լուրջ տագնապներու ու մարտահրաւերներու դէմ յանդիման կը գտնուի: Մեծի



Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ազգընտիր Զայրապետը՝ ՆՍՕՏՏ Արամ Ա. Սրբազանազոյն Կաթողիկոսը 2023 Նոր Տարին դարձեալ իռչակեց «Սփիւռքի Տարի», սակայն շեշտը դնելով ինքնաքննութենէ վերակազմակերպման

* Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս սոյն հարցազոյցը ունեցաւ Cilicia TV-ին հետ, 30 Դեկտեմբեր 2022-ին:

Շար.՝ Էջ 4 >

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԽՄԲԱԿՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԿՈՂՄԷ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՇՐՋԱԾԱԿՄԱՆ ԵՒ ՄԱՐԿԱՅԻՆ ԱՂԵՏԻ ԽՈՐԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Ատրպէյճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը, կոպտօրէն խախտելով միջազգային իրաւունքի ձեւաչափերը՝ 2020-ի 9 Նոյեմբերի Եռակողմ յայտարարութեամբ ստանձնած պարտականութիւնները, Դեկտեմբերի 12-ից սկսած բնապահպանական կեղծ պատրուակով խորացնում է Արցախի շրջափակման քաղաքականութիւնը:



Շարունակուող լիակատար շրջափակման եւ ձմրան պայմաններում ելեկտրական ուժանիւթի, համացանցի, իսկ 2023-ի Յունուարի 17-ից նաեւ կազմի մատակարարման հերթական խափանումները Արցախի Զանրապետութեան ազգաբնակչութեանը կանգնեցնում են մարդկային աղէտի եզրին: Դրան գումարով էլ նաեւ Յունուարի 17-ի լոյս 18-ի գիշերը խաղաղապահների ուղեկցութեամբ Գորիսից Ստեփանակերտ վերադարձող 19 երեխաների նկատմամբ «բնապահպանման աշխատակիցներ»-ի ահաբեկչական գործողութիւնները, եւ այդ ամէնը ատրպէյճանական մամուլում ու հասարակական ցանցերում տարածելը:

Արցախի Զանրապետութեան ազգաբնակչութեան նկատմամբ Ատրպէյճանի իշխանութիւնների կողմից շարունակուող սողացող պատերազմը տեղի է ունենում աշխարհի՝ գրեթէ լուռ համաձայնութեամբ: Այն նպատակ ունի կոտորել արցախահայութեան կամքը՝ տասնեակ հազարաւոր մարդկանց ցեղային գտումների միջոցով բռնատեղահանել իրենց պատմական հայրենիքից: Նմանօրինակ քայլերով Ատրպէյճանը փորձում է նաեւ ձախողել տարածաշրջանում պատերազմի օջախների մարմանն ու հա-

Շար.՝ Էջ 8 >

Խմբագրական

ԱՐՑԱԿԵՆ ՍՈՒՐԻԱ... ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՇՈՒՐՁ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍԼՈՒԹԻՒՆ

Արցախի աւելի քան մէկ ամսուան շրջափակումը, հակառակ հնչող բազմապիսի կոչերուն, գործնական ոչ մէկ արձագանգ գտաւ: Եթէ նկատի չառնենք մարդկային աղիտալի վիճակը բարելաւելու մարդասիրական սահմանափակ օժանդակութիւնները, յստակօրէն կը տեսնենք որ միջազգային ընտանիքը, ՄԱԿ-ը գործնական ոչ մէկ քայլի կը նախաձեռնեն մարդկային աղետը կանխելու համար:

Անկախ երկիրներու քաղաքական դիրքորոշումներէն, մարդկային իրաւունքներու պաշտպանութեան անունով հանդես եկող կազմակերպութիւններ, պետութիւններ կոչերէն մէկ քայլ անդին չեն անցնիր անարդարութեան վերջ տալու եւ Արցախի բնակչութեան կենսական իրաւունքները վերականգնելու համար:

Առիթը շահագործելով Ատրպէյճան մարդկային ճգնաժամէն անդին անցնելով Արցախը հայաթափելու հեռահար ծրագիր կը մշակէ, կոպտօրէն խախտելով իր իսկ ստորագրած 9 Նոյեմբերի տխրահռչակ համաձայնագիրն անգամ:

Հարաւային Կովկասէն ոչ շատ հեռու՝ Սուրիոյ մէջ եւս մարդկային աղիտալի իրավիճակ կը տիրէ: Ձմրան ամենացուրտ օրերուն մարդիկ զրկուած են վառելանիւթ եւ էլէկտրականութենէ, դեղորայքի տաճնապը տակաւ կը սաստկանայ: Բնակչութիւնը, անկախ տնտեսական տաճնապէն, առողջ ապրելու նուազագոյն պայմաններն իսկ կը դժուարանայ ապահովել:

Գերպետութիւններու բախող շահերը կուրցուցած են անոնց ղեկավարներն ու ամլացուցած մարդկային իրաւունքներու պաշտպանութեան մեքանիզմները:

Ճիշդ է որ քաղաքական առումով երկու հանրապետութիւններու՝ Սուրիոյ եւ Արցախի, դիմագրաւած հարցերը բոլորովին տարբեր են, սակայն մարդկային իրավիճակները համարեա՛ իրերանման են: Նման աղետներ արձագանգի պէտք է արժանանան ու բողոքի լայն ալիք բարձրացնեն աշխարհով մէկ, յատկապէս մարդկային իրաւունքներու պաշտպանութեամբ հանդես եկող, սակայն ամլացած, կազմակերպութիւններու կառոյցներուն դիմաց՝ նախ կասեցնելու մարդկային կեանքին սպառնացող շրջափակումները, ապա դատապարտելու աղետը քաղաքական նպատակներու ծառայեցնող պետութիւններ եւ վերջապէս պատասխանատուութեան իրաւիբելու նման աղետներու պատճառ դարձող կողմեր:

Եթէ Սուրիոյ տասնամեայ պատերազմը ցոյց կու տայ, որ ժողովուրդը իր միասնակամութեամբ կրնայ յաղթահարել նման աղետներ ու վերականգնել երկրի ապահովութիւնն ու կայունութիւնը՝ օգտուելու իր իսկ երկրին անսահման հարըստութիւններէն, Արցախի պարագային ատրպէյճանական կողմին ոտնձգութիւնները մեծագոյն ապացոյցն են այն իրողութեան, որ Արցախի բնակչութեան փրկութիւնը կարելի կրնայ դառնալ միայն Արցախի անկախութեան միջազգային ճանաչումով:

Քաղաքական ծրագիրները, սակայն, աշխարհաքաղաքական ներկայ եռուն վիճակին մէջ, երկար ժամանակի ու քաղաքական բարդ բանակցութիւններու կը կարօտին կեանքի կոչուելու համար, եականը մարդկային աղետներու կանխումն է առաջին հերթին: Աղետներ, զորս կարելի է կասեցնել եթէ մարդկութիւնն ու մարդկայինը գերծ կացուցանուին քաղաքական հաշիւներէ: Այլապէս ի՞նչ նպատակով յառաջացած են ու կը շարունակեն գործել մարդկային իրաւանց կազմակերպութիւնները...

«Գ.»

-Քրեմլին յայտնեց, որ Ռուսիոյ Նախագահ Վլատիմիր Փութին իր թուրք պաշտօնակից Ռեճեպ Թայյիպ Էրտողանի հետ հեռաձայնային հարորդակցութեամբ խորհրդակցած է Սուրիոյ իրավիճակին եւ այլ հարցերու շուրջ: Քրեմլին հարորդագրութեամբ յայտարարեց, որ երկու Նախագահները խորհրդակցած են Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման, ինչպէս նաեւ Ռուսիոյ, Թուրքիոյ եւ Սուրիոյ միջեւ եռակի խորհրդակցութիւններ կազմակերպելու գծով Անգարայի Նախաձեռնութեան շուրջ:



Կողմերը անդրադարձած են նաեւ Ասթանայի բանակցութեանց գծով Ռուսիոյ, Իրանի, Թուրքիոյ եւ Սուրիոյ մօտեցումներու համադրման կարելիութեան:

-Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հարորդագրութեամբ խստի դատապարտեց ԱՄՆ-ի վարչակազմին եւ ԱՄՆ-ի Առեւտուրի Նախարարութեան ենթակայ արդիւնաբերութեան եւ ապահովութեան գրասենեակին որոշումը՝ սուրիական առողջապահութեան հատուածին դէմ, որուն համաձայն սուրիական պետական եւ անձնական հիւանդանոցներուն կ'արգիլուի տարբեր տեսակի օգնութիւններ կամ ծառայութիւններ տրամադրելը:



Նախարարութիւնը անգամ մը եւս կոչ ուղղեց միջազգային կազմակերպութիւններուն՝ անյապադօրէն միջամտելու եւ վերջ տալու ԱՄՆ-ի ոտընձգութիւններուն:

-Սուրիական Վառելանիւթի Ընկերութիւնը յայտարարեց, որ քարիւղային արտադրութիւններու ներածման ընթացքի կարգաւորման լոյսին տակ, սուրիական Նահանգներուն տրամադրուած պէնզինի եւ մագնիզի քանակը աւելցաւ: Նահանգներուն տրամադրուած մագնիզի ընդհանուր քանակը հասաւ 5 միլիոն լիթրի, իսկ պէնզինը՝ 3 միլիոն լիթրի, օրական դրութեամբ: Այսպիսով քանակի բարելաւման տոկոսը հասաւ մօտաւոր 75%-ի:



-Մոսկուայի մէջ Սուրիոյ Հանրապետութեան դեսպան դոկտ. Պաշշար ալ -Ճաաֆարի հանդիպում ունեցաւ Ռուսիոյ արտաքին գործոց Նախարարի միջազգային կազմակերպութիւններու հարցերու փոխանորդ Սերկէյ Ֆերշենէնի հետ: Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան տարածաշրջանային եւ համաշխարհային մասշտապով արձանագրուած վերջին զարգացումներուն շուրջ: Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան յարկէն ներս տեղի ունեցած հանդիպումին ընթացքին, կողմերը յայտնեցին քաղաքական կարգ մը հարցերու շուրջ Ռուսիոյ եւ Սուրիոյ նոյնանման մօտեցումները, շեշտելով Դամասկոսի եւ Մոսկուայի գործակցութեան գոյատեւման անհրաժեշտութիւնը՝ ի նպաստ երկու երկիրներու շահերուն:



Կողմերը անդրադարձան նաեւ Սուրիոյ վրայ արեւմուտքի բանեցուցած տնտեսական պատժամիջոցներու աղետալի ազդեցութեան, աւելցնելով, որ անոնք արգելք կը դառնան մարդասիրական օգնութիւններու, ներառեալ սնունդի եւ դեղորայքի հասանելիութեան:

Լուրեր Հայաշխարհին

ԶՕՐԱՇԱՐԺ Ի ԽՆԴԻՐ ԱՐՃԱՆԻ ԴԱՇՏԴԱՆՈՒԹԵԱՆ

Ստորել կը ներկայացնենք ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսին կոչը՝ յանուն Արցախի պաշտպանության:

Արցախի պաշտպանությունը համահայկական անյետաձգելի հրամայական է այսօր. վաղը կրնայ ո՛րև ըլլալ:

Արցախի հայութիւնը ինքնորոշման իր հաւաքական կամքը բազմիցս արտայայտած է:

Արցախի հայութեան ինքնորոշման իրաւունքի պաշտպանութիւնը ու



անոր ընկերատնտեսական բարօրութեան օժանդակութիւնը իրաքանչիւր հայու եւ համայն հայութեան նուիրական պարտքն է:

Զօրաշարժի պէտք է ենթարկել մեր ժողովուրդի գաւակները՝ ի խնդիր Արցախի փրկութեան:

Արդ, կոչ կ'ուղղենք Հայ եկեղեցւոյ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերուն, որ բոլոր համայնքներուն, կազմակերպութիւններուն ու կառոյցներուն գործօն մասնակցութեամբ, միացեալ ծրագրաւորուով ու հաւաքական աշխատանքով, իրաքանչիւր թեմ իր տեղական պայմաններուն համապատասխան մօտեցումով, դիմէ հետեւեալ քայլերուն:

- Մեր ժողովուրդի գաւակներուն մօտ արծարծ պահել Արցախի ինքնորոշման իրաւունքի պաշտպանութեան հրամայականը՝ իբրեւ համահայկական առաջնահերթութիւն:

- Արցախի ապաշրջափակման գծով ազդու միջոցներով լծուիլ քարոզչական աշխատանքի օտար շրջանակներու մէջ՝ պետութիւն, քաղաքական հասարակութիւն, կազմակերպութիւններ, մամուլ եւ այլն...

- Նախաձեռնել Արցախի մեր գաւակներուն անմիջական կարիքներուն օժանդակութեան: Համակարգումի գծով շուտով տեղեակ պիտի պահենք մեր թեմերը:

Մենք մնայուն կապի մէջ ենք Արցախի իշխանութեան հետ եւ Արցախի ապաշրջափակման ուղղութեամբ Մեր աշխատանքները կը շարունակենք: Ազգային կեդրոնական վարչութիւնը մօտէն կը հետեւի Արցախի շուրջ տեղի ունեցող զարգացումներուն: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը պիտի մասնակցի Արցախի բարեկամներու ֆորումին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
16 Յունուար 2023
Անթիլիաս

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Խստօրէն դատապարտում ենք քննչական կոմիտէի կողմից Հայաստանի Հանրապետութեան քրեական օրէնսգրքի 236-րդ, 10-րդ և 2-րդ մասի յատկանիշներով Օգոստոսի 25-ին նախաձեռնուած քրեական վարոյթի շրջանակներում Դաշնակցութեան անդամների եւ համակիրների բնակարաններում խուզարկութիւնների, ձերբակալութիւնների եւ հարցաքննութիւնների վերաբերեալ տարածած հաղորդագրութեան մէջ տեղ գտած անբերելի կեղծ տեղեկութիւնների եւ օրէնքի խախտումների վերաբերեալ, որոնք եւս մէկ անգամ ապացուցում են, որ այս շինծու գործի նպատակն է շեղել հանրութեան ուշադրութիւնը օրուայ քաղաքական իշխանութիւնների հայրենադաւ ծրագրերից, կասեցնել դրանց դեմ պայքարող անձանց եւ ուժերին:



Ռոտահարելով անմեղութեան կանխավարկածը, փորձելով քողարկել իր ապօրինիութիւնները, քննչական կոմիտէն այս հաղորդագրութեամբ փորձում է հանրութեան մօտ ստեղծել տպաւորութիւն՝ թէ իբր իրականացուած խուզարկութիւնների արդիւնքում «պարզուել է», որ հայրենադաւ իշխանութիւնների դեմ պայքարող անձինք հաւաքներին մասնակցել են նիւթական շահագործութեամբ: Սա ոչ միայն անարգանք է հայրենիքի համար պայքարողների հասցէին, այլեւ ունի նպատակ՝ վարկաբեկելու այդ պայքարը, «Հայաստան դաշինքը», Դաշնակցութիւնը, ստեղծի «հիմքեր» նոր ձերբակալութիւններ եւ ակնյայտ ոչ իրաւաչափ ձերբակալուած անձանց նկատմամբ կալանաւորումներ իրականացնելու համար:

Իրաւապահ մարմինների կողմից իրականութեանը չհամապատասխանող տեղեկատուութեան տարածումը նպատակ է հետապնդում կեղծ հիմքեր ստեղծել այս ապօրինի քրեական գործը շարունակելու, դատական ատեաններում կալանաւորումը որպէս խափանման միջոց ընտրելու միջնորդութիւնները «հիմնաւորելու» նպատակ:

Ակնյայտ քաղաքական հետապնդման այս ամօթալի վարքագծի փոխարէն քննչական կոմիտէն եւ դատախազութիւնը պարտաւոր էին քրեական հետապնդում նախաձեռնել ապօրինի գաղտնալսման համար, այլ ոչ թէ ապօրինիութիւնների միջոցով մաս դառնալ հայրենադաւ ծրագրերի իրականացմանը կամ անխնայ օգտագործման գործիք դառնալ այդ ծրագրերը իրականացնողների ձեռքին:

ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ
13 Յունուար 2022, Երեւան

ՖՐԱՆՍԱՆ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ ԱՆՅԱՊԱՂՈՐԵՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՆՈՒ ԼԱՉԻՆԻ ՄԻՋԱՆՅՔԷՆ ՏԵՂԱՇԱՐՇԻ ԱՉԱՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԻՒՆԸ

ԵԱՀԿ Մշտական խորհուրդի յատուկ նիստին, որ իրաւիքուած էր Հայաստանի նախաձեռնութեամբ, Ֆրանսան կրկնած է իր կոչը՝ անյապաղ եւ անվերապահօրէն վերականգնելու Լաչինի միջանցքէն տեղաշարժի ազատութիւնն ու անվտանգութիւնը՝ յարգելով տեղւոյն բնակչութեան իրաւունքները: «Արմէնփրէս»-ը այս մասին կը տեղեկանայ ԵԱՀԿ Ֆրանսայի մշտական ներկայացուցչութեան մամուլի ծառայութեան հաղորդագրութենէն:



«Ֆրանսա վերահաստատած է իր յանձնառութիւնը՝ աջակցելու Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ բանակցութիւններու յառաջընթացի որոնման՝ տարածաշրջանի մէջ կայուն խաղաղութիւն հաստատելու նպատակով, նաեւ պատրաստակամութիւնը՝ նպաստելու այդ նպատակի իրագործման՝ բոլոր գործընկերներուն եւ շահագրգիռ կողմերուն հետ գործակցելով», նշուած է ԵԱՀԿ Ֆրանսայի մշտական ներկայացուցչութեան մամուլի ծառայութեան Twitter-ի պաշտօնական էջին վրայ:

Յիշեցնենք, որ ՀՀ արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեան աշխատանքային այցելութեամբ Վիեննա է, ուր կը մասնակցի Հայաստանի նախաձեռնած ԵԱՀԿ Մշտական հորիւրդի յատուկ նիստին:

ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԵՐՈՂԱՅԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԱՌՃԱՆՅ ՎԱՆԴԻՊՈՒՄ

ՀՅԴ Հայ Դատի Երողայի գրասենեակին հրաւերով 16 Յունուարի երեկոյեան գումարուած է ՀՀԴ Հայ Դատի Երողայի յանձնախումբերու առցանց խորհրդակցական ժողով, որուն ընթացքին քննարկուած է համաեւրոպական մակարդակի, Երողական Միութեան անդամ երկիրներու եւ Մեծ Բրիտանիոյ Հայ Դատի յանձնախումբերու աշխատանքներուն ներկայ փուլը՝ պայմանաւորուած Ատրպէյճանի կողմէն Արցախի պարտադրուած ամբողջական շրջափակումով: Քննարկումի ընթացքին վերազնահատուած են նախընթաց աշխատանքները, քննարկուած են յառաջիկայ օրերուն եւ շաբաթներուն նախատեսուող ձեռնարկներ՝ Երողայի հասարակական-քաղաքական եւ պետական շրջանակներու մօտ Դարաբաղեան հիմնահարցին, Արցախի մէջ ստեղծուած մարդկային իրավիճակին եւ Ատրպէյճանի ցեղային գտումներ հետապնդող քաղաքականութեան առնչութեամբ իրագրելուածութեան բարձրացումին գծով:



Յատկապէս կարեւոր համարուած են Արցախի համար միջազգային զօրակցութեան ապահովման ու Ատրպէյճանի նկատմամբ միջազգային ճնշումներու ուժեղացման աշխատանքները: ՀՀԴ Հայ Դատի Երողայի յանձնախումբերու պատասխանատուները մեծ ակնածանքով ու ոգեւորութեամբ անդրադարձած են Արցախի հերոսական ժողովուրդին տոկոսութեան ու պայքարի կամքին՝ վերահաստատելով Արցախի շահերու պաշտպանութեան շուրջ Հայ Դատի հաստատակամ պայքարը:

ՀՀԴ Բիւրոյի Հայ Դատի Կեդրոնական Գրասենեակ
17 Յունուար 2023

«ՄԵՐ ԱԶԳԻՆ...»

Սկիզբ՝ էջ 1

վրայ: Յաջորդական նման հռչակում կատարելու համար Վեհափառ հայրապետը, վստահաբար, լուրջ եւ նոյնիսկ մտահոգիչ պատճառներ ուներ: Սփիւռքը արդէն իսկ մաշումի ու գունաթափման ընթացքի մէջ է եւ անմիջական կարիքը ունի վերակազմակերպման: Ան սկսած է անտարբեր ըլլալ ինքն իր նկատմամբ եւ յուսախաբ՝ Յայաստանի նկատմամբ, յատկապէս վերջին տարիներուն, Արցախի 44-օրեայ պատերազմէն ետք: Արցախի հարցը կը համենայն եւ մեր սիրելի Արցախը կը գտնուի շրջափակման մէջ:

Ինչ կը վերաբերի երիտասարդութեան, ան բաւականին հեռու է մեր եկեղեցական ու ազգային կեանքէն, մեր հաւաքական կեանքէն:

Արդարեւ, 2022 տարուան աւարտին եւ Նոր Տարուան՝ 2023-ի սեփին, Արամ Ա. Վեհափառ Յայրապետը պիտի անդրադառնայ յիշեալ բոլոր մտահոգութիւններուն, ի մասնաւորի շեշտը դնելով Սփիւռքի վերակազմակերպման անհրաժեշտութեան վրայ, Կաթողիկոսարանի Սիլիսիա թիվին տուած իր յատուկ Յարցազոյցի ընթացքին:

Աստուած Օգնական Վեհափառ Տէր:

1.- Վեհափառ Տէր, մեծապէս շնորհակալ ենք, որ այս տարի եւս մեզի առիթ ընծայեցիք տարուան աւարտին հարցազոյց ունենալու Ձերդ Սրբութեան հետ: Երբ յետադարձ ակնարկ մը նետեք անցնող տարուան հայ կեանքին վրայ, ի՞նչ արժեւորում կրնաք կատարել:

1.- Բնականաբար, անցնող տարուան ընթացքին հայ կեանքի գանձանքն անհամար անհատներն ենք: Եղան իրագործումներ եւ դրական քայլեր անուցան. սակայն, ընդհանրապէս հայ կեանքը շարունակեց դիմագրաւել լուրջ տագնապներ, իմաստահարներ ու մարտահրաւերներ: Իրապաշտ մօտեցումը երբեմն մեզ կրնայ յոռետես արժեւորումներու առաջնորդել: Անհրաժեշտ է ըլլալ առարկայական ու իրատես, կարենալ յստակօրէն տեսնելու մեր բացթողումները ու ձեռքբերումները, եւ ապա վերանորոգ հաւատքով ու յառաջատեսիլ կամքով մշակել նոր ծրագիրներ: Ազգերու ու կազմակերպութիւններու կեանքին մէջ տագնապները բնական են. սակայն անհրաժեշտ է զանոնք դիմագրաւելու քաջութիւնը ու իմաստութիւնը ունենալ: Այս կը պահանջէ մեր ազգի կեանքին ներկայ հանգրուանը:

2.- Վեհափառ Տէր, վերջին Ազգային Ընդհանուր Ժողովը կարեւոր հանգրուան մըն էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան մէջ: Ի՞նչ հեռանկար ունիք ապագային նկատմամբ:

2.- Մեր Սուրբ Աթոռի կեանքին ու առաքելութեան մէջ Ազգ. Ընդհանուր Ժողովները կը գումարուին նախ յետադարձ ակնարկով կատարուած աշխատանքը արժեւորելու, եւ ապա յառաջիկայ շրջանի աշխատանքի առաջնահերթութիւնները ճշդելու: Գոհունակութեամբ կ'ուզենք հաստատել, որ հակառակ անցնող տարիներու իրերայաջորդ տագնապներուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր առաքելութեան առնչուած գանձանք մարդերէն ներս յատկանշական իրագործումներ ձեռք բերաւ: Ծուրջ 400 էջերու վրայ տարածուած Ազգ. Ընդհանուր Ժողովին ներկայացուած տեղեկագրին մէջ հակիրճ կերպով պարզուած են մեր Սուրբ Աթոռի առաքելութեան կարեւոր երեսները: Յառաջիկայ շրջանը ծրագրելու իմաստով, թէ՛ Մեր պատգամին եւ թէ՛ յատուկ նիստերու ընթացքին կատարուած քննարկումներուն ճամբով լուսարձակի տակ բերինք հետեւեալ գլխաւոր հարցերը. - հայ ընտանիք, հայակերտում, երիտասարդութիւն, Սփիւռք, Արցախ, Յայաստան: Անոնց հետ աղերս ունեցող մտահոգութիւնները ու առաջադրութիւնները կարեւոր տեղ պիտի գրաւեն յառաջիկայ շրջանի մեր առաքելութեան օրակարգին վրայ: Այսօր աշխարհը տարբեր է իր պայմաններով ու մարտահրաւերներով եւ անոնց անդրադարձը մեր ժողովուրդի կեանքէն ներս սկսած է դառնալ տիրական: Չենք կրնար անտեսել այս երեւոյթը: Մեր եկեղեցւոյ մօտեցումը պէտք է ըլլայ համահունչ՝ մեր ժողովուրդը դիմագրաւող ներկայ տագնապներուն ու մարտահրաւերներուն:

3.- Վեհափառ Տէր, անցնող տարին հռչակեցիք «Սփիւռքի Տարի»: Նոյնպէս նաեւ՝ ներկայ տարին: Ի՞նչ պատճառներ ու մտահոգութիւններ Ձեզ մղեցին դիմելու այս քայլին:

3.- Ինչպէս քիչ առաջ նշեցինք, կ'ապրինք համաշխարհայինացման շրջանի մը մէջ: Համաշխարհայինացումը իր գանձանքն երեւոյթներով սկսած է շեշտուած ներկայութիւն դառնալ մեր ժողովուրդի կեանքէն ներս: Այլեւս չենք կրնար մեր համայնքներուն շուրջ պատեր հիւսել ու կողմացած ապրիլ: Անցեալին, մեր լեզուն, մշակոյթը եւ ամենօրեաները երաշխաւորեցին մեր ինքնութիւնը ու ամբարցուցին մեր գոյութիւնը, մեր շրջապատէն մեզ պաշտպանող պատեր հանդիսանալով: Համաշխարհայինացումը քանդած է ամեն տեսակ պատնէշ ու սահմաններ բոլոր ազգերու կեանքէն ներս. կ'ապրինք բազմացեղ, բազմակրօն, բազմազոյն ընկերութիւններու մէջ: Ներկայ պայմաններուն մէջ սեփական ինքնութիւն ու կառոյց, ամենօրեան ու արժեք պահելը ու պաշտպանելը փաստօրէն դարձած են ամենօրեայ պայքար, յատկապէս փոքր ազգերու համար: Հետեւաբար, Սփիւռքը չի կրնար այլեւս եղածը եւ ունեցածը պաշտպանել. անհրաժեշտ է նոր ժամանակներու ու նոր հրամայականներուն համապատասխան մօտեցումներ որդեգրել, բնականաբար, հաւատարիմ մնալով մեր հիմնական արժեքներուն ու իտեպներուն: Եթէ հայապահպանումը ուղղուած ըլլայ միայն եղածը պահելու, մեզ պիտի առաջնորդէ դէպի ինքնակոտորում ու լճացում: Հայա-

պահպանումը պէտք է ուղղուած ըլլայ մեր ունեցածը վերակազմակերպելու, վերանորոգելու, վերաշնչաւորելու եւ գայն դարձնելու համապատասխան՝ ներկայ ժամանակներու պահանջին: Այս կը նպատակադրէ Սփիւռքի վերակազմակերպումը: Այս նպատակը իրագործելու համար անհրաժեշտ է դիմել գործնական քայլերու՝ նախ քննական ու առարկայական մօտեցումով արժեւորել Սփիւռքի պարզած ներկայ գոյակիճակը, ճշդել ընդհանրական եւ տեղական մտահոգութիւնները, եւ ապա վերակազմակերպումի ընթացք մը ճշդել, բնականաբար նկատի ունենալով տարբեր համայնքներու ներքին դրուածքները ու շրջապատի պայմանները: Այս ծիրէն ներս, պէտք է յատուկ կարեւորութիւն տրուի ինքնութեան հարցին: Ի՞նչ կը նշանակէ հայ ըլլալ Սփիւռքի մէջ, ի՞նչ է հայուն ինքնաճանաչումը եւ անկէ յառաջացող հրամայականները: Ինչպէ՞ս կարելի է մէկ կողմէն՝ հայու ինքնութիւնը պահել ամուր, եւ միւս կողմէն՝ մաս կազմել տուեալ ընկերութեան հաւաքական ինքնութեան: Այս եւ նման հարցերու քննարկումը անհրաժեշտ է որ շարունակուի՝ ո՛չ տեսական ու զգացական՝ այլ իրատես ու գոյութեանական մօտեցումով:

4.- Սփիւռքի գծով Ձեր պատգամներուն ու խօսքերուն մէջ, Վեհափառ Տէր, շեշտը կը դնէք «վերակազմակերպումի» վրայ: Ի՞նչ է Ձեր պատկերացումը այս մասին: Ինչպէ՞ս կարելի է լայնատարած Սփիւռքը վերակազմակերպել:

4.- Անցնող տարուան, ինչպէս նաեւ ներկայ տարուան Մեր հռչակագրերուն մէջ շեշտած ենք Սփիւռքի վերակազմակերպման հրամայականը: Վերակազմակերպումը պէտք է ըմբռնել իր նեղ առումով: Վերակազմակերպում կը նշանակէ ոչ թէ եղածը քանդել ու նորը շինել, այլ՝ վերանորոգել, վերաշխուժացնել, վերակառուցել, վերադասաւորել, վերակենսաւորել, բարեփոխել՝ միշտ համահունչ ներկայ պայմաններուն ու իրականութիւններուն եւ համապատասխան տուեալ համայնքի կարիքներուն ու սպասումներուն: Այս իմաստով, Սփիւռքը իր բոլոր կառոյցներով անյետաձգելի կարիքը ունի վերակազմակերպումի: Տեղքայլ՝ կը նշանակէ նահանջ: Մենք չենք կրցած քայլ պահել ներկայ աշխարհի արագընթաց փոփոխութիւններուն ու գարգացումներուն հետ: Կարծրատիպերով առաջնորդուած ենք: Անհրաժեշտ է, որ մեր կառոյցները, պահելով հանդերձ իրենց ինքնութիւնը, նպատակը ու արժեքներու համարկարգը, կարեւորութեամբ նկատի ունենան իրենց շրջապատին մէջ տեղի ունեցող գարգացումները. այլապէս, վիճի պիտի խորանայ հիմին ու նորին, մեր կառոյցներուն ու երիտասարդութեան միջեւ: Հարկ է ըլլալ զգոյշ:

5.- Վեհափառ Տէր, Սփիւռքի վերակազմակերպման ծիրէն ներս յատուկ կարեւորութիւն կը ներկայացնեն թեմերը: Ինչպէ՞ս կը տեսնէք թեմերու վերակազմակերպման գործընթացը:

5.- Եկեղեցին կեդրոնական տեղ ու իւրայատուկ դեր ունի համայնքներու կեանքին մէջ: Որպէս ազգային եկեղեցի, մեր եկեղեցւոյ կեանքին մէջ լայն չափով ներառուած են տուեալ համայնքի կեանքին գանձանքն տարածքները: Հետեւաբար, կարելի է բաժանման յստակ գիծ մը ճշդել եկեղեցւոյ ու համայնքին միջեւ. սակայն, անհրաժեշտ կը նկատենք եկեղեցին գանձանքն համայնքէն ներս գործող միւս կառոյցներէն՝ թէ՛ առաջնահերթութիւններու եւ թէ՛ մտածելակերպի ու գործելակերպի իմաստով: Թեմի մը վերակազմակերպումը բնականաբար իր դրական հետեւանքները պիտի ունենայ տուեալ համայնքի վերակազմակերպման մէջ: Հետեւաբար, հարկ է սկսիլ թեմերով: Այս ուղղութեամբ Մեր պատկերացումը փոխանցած ենք մեր թեմերուն եւ ներկայ տարուան Ռեզակագրին մէջ լայնօրէն անդրադարձած այս մասին, ճշդելով թեմերու վերակազմակերպման գործընթացը՝ գանձանքն հանգրուաններով ու հիմնական շեշտաւորումներով: Այս տարուան ընթացքին, որոշած ենք այցելել մեր թեմերը եւ Առաջնորդ Սրբազաններուն ու թեմական իշխանութիւններուն հետ քննել տուեալ թեմի վերակազմակերպման առնչուած հարցեր, մտահոգութիւններ ու կարելիութիւններ: Անկէ ետք, յաջորդ տարի, թեմերը Ազգ. Կեդրոնական Վարչութեան Կրօնական ու Բարոյական Ժողովներուն պիտի ներկայացնեն իրենց կատարած աշխատանքներու տեղեկագրերը ու մշակած ծրագիրները, որպէսզի կարելի ըլլայ հանգրուանային կերպով իրագործել գանձանք: Յիշեալ աշխատանքը դիւրին չէ. դժուարութիւններ պիտի դիմագրաւենք. մեր կեանքէն ներս որեւէ բան փոխելը, նոյնիսկ բարեփոխելը, հեզասան ընթացք մը չ'ենթադրել. սակայն երբ ունինք հաւաքական կամքը եւ մանաւանդ համոզումը՝ մեր համայնական կեանքը բարեփոխելու ու վերակազմակերպելու, պէտք է գայն կատարենք հաւաքական ճիգով ու ամբողջական նուիրումով:

6.- Վերջին տարիներուն Լիբանանի եւ Սուրիոյ մեր գաղութները լուրջ տագնապներ անցան: Վեհափառ Տէր, Ձերդ Սրբութիւնը անձնապէս գորակից ու մասնակից դարձաւ յիշեալ գաղութներու վերականգման աշխատանքներուն: Ինչպէ՞ս կը տեսնէք այս գաղութներու ապագան:

6.- Լիբանանի ու Սուրիոյ մեր գաղութները յատուկ կարեւորութիւն կը ներկայացնեն ընդհանրապէս մեր ժողովուրդին ու մասնաւորաբար Սփիւռքին համար: Սուրիոյ գաղութը պատմական գաղութ է. անոր անցեալն ու ներկան մեծապէս առնչուած են Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, արաբական ու իսլամական աշխարհէն ներս մեր ներկայութեան եւ հայ դատի հետապնդման աշխատանքներուն: Չմոռնանք, որ Տէր Զօրը կը գըտնուի Սուրիոյ մէջ եւ Յեղասպանութենէն վերապորոզներուն առաջին կայքը

Սկզբ՝ էջ 4

հանդիսացաւ Սուրիան: Լիբանանը առանցքային դեր ունեցած է Սփիւռքի վերակազմակերպման եւ յատկապէս հայ դատի հետապնդման եւ հայ կեանքի գանազան մարգերէն ներս մարդուժի պատրաստութեան մէջ. ան նաեւ իր քաղաքական դերակատարութիւնը ունի Լիբանանէն ներս, որպէս համայնքային երկիր: Ահա թէ ինչու, այս երկու գաղութներու ոչ միայն վերականգնումը, այլ նաեւ առաւել հզօրացումը մեծ նշանակութիւն ունին մեր ժողովուրդին համար: Անցնող տարիներուն համահայկական մասշտապով ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գլխաւորութեամբ գործնապէս սատարեցինք յիշեալ գաղութներու վերականգնումին գծով: Դժբախտաբար տագնապները կը շարունակուին: Յետեւաբար, մեր աշակերտները եւս պետք է շարունակուի մասնաւորաբար կրթական, ընկերային ու տնտեսական բնագաւառներէն ներս: Վերջին Ազգ. Ընդհանուր Ժողովին, Մեր պատգամին մէջ ընդգծեցինք, եւ Ազգային Ընդհանուր Ժողովը յատուկ կարեւորութեամբ անդրադարձաւ Լիբանանի ու Սուրիոյ գաղութներու վերականգնումի աշխատանքներուն գորակից դառնալու հրամայականին:

7.- Վեհափառ Տէր, արեւմտահայերէնը նահանջի մէջ է: Այս ուղղութեամբ Կաթողիկոսարանը Ձեր գլխաւորութեամբ աշխատանքի լծուած է պաշտպանելու արեւմտահայերէնը: Ցարդ ի՞նչ կատարուած է այս մարզէն ներս, եւ ի՞նչ են յառաջիկայ քայլերը:

7.- Ցաւալի իրականութիւն է արեւմտահայերէնի նահանջը: Պատճառները բազմաթիւ են ու այլազան: Անհրաժեշտ է լրջօրէն մտածել արեւմտահայերէնի նահանջը կասեցնելու, մնայուն կերպով աղաւաղումի ենթարկուող մեր լեզուն մաքրելու, եւ գանազան միջոցներով անոր գործածութեան գարկ տալու կարելիութիւններուն մասին: Սա դիւրին աշխատանք չէ, սակայն, անյետաձգելի անհրաժեշտութիւն է: Ազգի մը ինքնութեան կարեւոր ազդակներէն մէկն է լեզուն, մանաւանդ մեզի նման փոքր ազգի մը համար: Արեւմտահայերէնի առողջ պահպանումը պետք է դառնայ թէ՛ մեր եկեղեցւոյ, թէ՛ հայ դպրոցին եւ թէ՛ հայ կազմակերպութիւններուն ու մանաւանդ հայ ընտանիքին հիմնական մտահոգութիւնը: Հայ ընտանիքը, մեզի համար, ինչպէս միշտ կը շեշտենք, դպրոց է. ծնողը հայերէն պետք է խօսի իր գաւակներուն հետ: Հայ դպրոցէն ներս յատուկ կարեւորութիւն պետք է տրուի հայ լեզուին: Դժբախտաբար, համաշխարհային մշակոյթը իր քանդիչ ներկայութեամբ սկսած է մեր կեանքէն հեռացնել մեր լեզուն: Կարելի է յիշել բազմաթիւ երեւոյթներ, որոնք փաստօրէն կը նպաստեն արեւմտահայերէնի արագ ընթաց նահանջին: Ինչպէ՞ս կարելի է պայքարիլ այս մտահոգիչ երեւոյթին դէմ: Մեր Սուրբ Աթոռը շուրջ ուրբ տարիներ առաջ յանձնաժողով մը հաստատեց, յատուկ աշխատանք սկսաւ կատարել, նախ արեւմտահայերէնին առջնութեամբ գանազան հարցերու (կետադրութիւն, քերականական հարցեր, ուղղագրութիւն, ելլն.) յստակացումներ կատարելով ու հաւաքական ընդհանուր ուղղութիւն մը ճշդելով եւ ապա արեւմտահայերէնի գործածութեան տարածման նպաստող կարելիութիւնները քննելով: Սակայն, յաջորդական տագնապները եւ յիշեալ աշխատանքին անմիջականօրէն լծուած յանձնախումբի կարգ մը անդամներու մահը պատճառ հանդիսացաւ, որ դանդաղի յիշեալ գործընթացը: Եւ որով պիտի վերսկսինք մեր աշխատանքներուն, ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Հրատարակչական Լեզուագիտական Հիմնարկին հետ գործակցաբար:

8.- Վեհափառ Տէր, ներկայիս ի՞նչ հանգրուանի վրայ կը գտնուի Սիսի Կաթողիկոսարանի դատը:

8.- Այս մասին լայնօրէն անդրադարձած ենք Ազգային Ընդհանուր Ժողովին ներկայացուած տեղեկագրին մէջ, ինչպէս նաեւ գանազան առիթներով մամուլի ճամբով տեղեկ պահած մեր ժողովուրդը դատի ընթացքին մասին: Հոս կ'ուզենք յիշեցնել, որ Եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարանին յղուած Սիսի Կաթողիկոսարանի վերադարձի թղթածրարը նոյն դատարանին կողմէ, դատարանի ներքին ուղեգրին լոյսին տակ, թելադրուեցաւ որ ներկայացնենք թղթական դատարան: 30 Յուլիս 2019-ին թղթածրարը ներկայացուեցաւ Զոգանի (Սիս) Նախադատ Ատեանին: Յայտնենք, որ մեր դատական հայցով կը պահանջուի Սիսի Կաթողիկոսարանը արձանագրել իր իրաւատիրոջ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անունով: Բնականաբար, մեր պահանջը հիմնաւորող անհրաժեշտ տուեալները ներկայացուած են թղթածրարին մէջ: 11 Նոյեմբեր 2021-ին Զոգանի Նախադատ Ատեանը մերժեց մեր հայցը՝ ոչ իրաւական տուեալներէ մեկնած: 22 Փետրուար 2022-ին, թղթածրարը յղուեցաւ Վերադատ Ատեանին: Մեր իրաւական յանձնախումբը մօտէն կը հետեւի դատի ընթացքին եւ համապատասխան քայլերու պիտի դիմէ հասնելու համար մինչեւ Եւրոպայի Մարդկային Իրաւանց Դատարան:

9.- Վեհափառ Տէր, տասնըփնչ տարիներ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական ու Գործադիր վարչութեանց Ատենապետը ըլլալէ յետոյ վերջերս ընտրուեցաք նոյն Խորհուրդի Նախագահ: Ի՞նչ սպասումներ ունիք Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդէն եւ ընդհանրապէս միջ-եկեղեցական շարժումէն:

9.- Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի բարձրագոյն պաշտօնը Կեդրոնական ու Գործադիր վարչութեանց ատենապետութիւնն է, գործընկերը 1991-էն մինչեւ 2006, երկու իրերայաջորդ շրջաններ, դառնալով նոյն պաշտօնին համար ընտրուած առաջին ուղղափառ ու երիտասարդը:

Խորհուրդի նախագահութիւնը վարչակազմակերպական տարբեր հանգամանք ու պատասխանատուութիւն կ'ենթադրէ: Միջ-եկեղեցական շրջանակներ ուզեցին որ անպայման ստանձնենք ներկայ պատասխանատուութիւնը, նկատի ունենալով Մեր տարիներու փորձառութիւնը եւ ընդհանրապէս միջ-եկեղեցական շարժումին դիմագրաւած լուրջ մարտահրաւերները: Յայտնենք, որ ներկայ ժամանակներուն միջ-կրօնական ու յատկապէս քրիստոնեայ-իսլամ յարաբերութիւնները սկսած են առաջնային տեղ գրաւել եկեղեցիներու կեանքին ու առաքելութեան օրակարգին վրայ: Թէ՛ միջ-եկեղեցական ու թէ՛ միջ-կրօնական յարաբերութիւններուն մեր Սուրբ Աթոռը կը շարունակէ բերել իր գործօն մասնակցութիւնը սերտ յարաբերութիւններ մշակելով եկեղեցական թէ՛ կրօնական կարեւոր կեդրոններուն ու պատասխանատուներուն հետ:

10.- Վեհափառ Տէր, ինչպէս քաջ գիտեք, Հայաստանը լուրջ տագնապներ կը դիմագրաւէ: Ի՞նչ է Ձեր տեսակետը Հայաստանը ներկայ կացութենէն դուրս բերելու գծով:

10.- Այս մասին յաճախակի առիթներով արտայայտուած ենք ու կարեւորութեամբ շեշտած հետեւեալ կետերը: - ա) Մեր ազգին, մարդուժին ու ներուժին համախմբումը Հայաստանի հզօրացման, Արցախի ինքնորոշման պաշտպանման եւ մեր ազգի իրաւունքներու հետապնդման շուրջ անվիճելի հրամայական է: բ) Հայաստանը ներկայ ճգնաժամէն դուրս բերելու միակ ազդու միջոցը Հայաստանի, Արցախի ու Սփիւռքի պետական, հոգեւոր եւ քաղաքական պատասխանատուներու համախմբումն է, եւ վճռական որոշումներու կայացումը՝ ի խնդիր Հայաստանի փրկութեան: Նման վճռորոշ քայլի մը ուշացումը մեզ պիտի առաջնորդէ դէպի նահանջ, տեղի տալով Ատրպեյճանի հետզհետէ բազմացող պահանջներուն: Այսօր մենք առանձին ենք. պետք է վստահիլք մեր սեփական ուժին: Շրջանի աշխարհաքաղաքական պայմանները ի նպաստ մեզի չեն: Յետեւաբար, մեր ազգի ներքին ուժին ու ներուժին համախմբումը մեզի համար պիտի դառնայ հզօր յենարան՝ խոհեմութեամբ ու քաջութեամբ դիմագրաւելու Հայաստանին ու Արցախին սպառնացող ահաւոր վտանգները:

11.- Արցախի 44-օրեայ պատերազմէն յետոյ մեր ժողովուրդը ընդհանրապէս դարձած է յուսահատ. Արցախի ապագան կը մնայ անորոշ: Վեհափառ Տէր, ըստ Ձեզի ի՞նչ կարելի է ընել:

11.- Ինչպէս քիչ առաջ ըսինք, շրջանի աշխարհաքաղաքական պայմանները ի նպաստ մեզի չեն: Հայաստանի բարեկամ նկատուող երկիրները սկսած են ժողովրդային բացատրութեամբ, իրենց գիւլիկն մէջ շուր խառնել, եւ 44-օրեայ պատերազմէն թուրքոյ գօրակցութեամբ յաղթական դուրս ելած Ատրպեյճանը պահանջատէրի դիրքով կը խօսի Հայաստանին հետ: Այս կացութեան դիմաց, դիտեցէք մեր կեանքը. ներքին բաժանումներ ու փոխադարձ ատելութիւն: Հայաստանի անվտանգութեան, անկայտութեան ու հողային ամբողջականութեան պահպանումը, ինչպէս նաեւ՝ Արցախի ինքնորոշման իրաւունքի պաշտպանութիւնը պետք է նկատուին ամեն բանէ վեր: Ի՞նչ կարելի է ընել այս ուղղութեամբ: Զգացական, տեսական, հռետորական, լոգունքային մօտեցումներէ հարկ է հեռու մնալ: Նստիլք եւ իրատես մօտեցումով որոշենք թէ ինչ կրնանք ընել: Այլապէս, յուսահատութեան, յուսախաբութեան ու անորոշութեան տակ ընկճուած նահանջի ճամբան պիտի շարունակենք: Նման կացութեան դիմաց լուռ ու անտարբեր մնալը մեր եկեղեցւոյ, եւ անձնապէս Մեզի համար անընդունելի է: Մենք մեր ժողովուրդին յոյս ներշնչող, մեր ժողովուրդին հաւատքը կռնող, հայրենիքի անկախութեան ու իրաւունքներու պաշտպանութեան մեր ժողովուրդին յանձնառութիւնը աւելի ամրացնելու կոչումը ու պարտաւորութիւնը ունինք:

12.- Վեհափառ Տէր, ի՞նչ պատգամ ունիք մեր ժողովուրդին

12.- Կ'ապրինք դժուար ժամանակներու մէջ: Ծանր եւ աննախատեսելի տագնապներով շրջապատուած ենք՝ ներ-գաղութային, համասփիւռքեան ու համահայկական: Պետք չէ բաւարարուիլք միայն կացութիւնը պարզելով, մեր տագնապներուն մասին խօսելով. պետք է շարժիլք տագնապները յաղթահարելու հաւաքական հաւատքով ու տեսլականով: Բացուող Նոր Տարուան սեմին, կ'աղօթենք ամ Բարձրեալն Աստուած, որ անսասան պահէ մեր ազգը, հզօր՝ Հայաստանն ու Արցախը եւ ամուր՝ մեր ժողովուրդի ներքին միութիւնը, եւ Իր երկնային շնորհներով լեցնէ մեր գաւակներուն կեանքը: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս փոթորիկին մէջ մնացած իր աշակերտներուն ըսաւ՝ «մի՛ վախճաք, հաւատացէ՛ք»: Ազգովին ահաւոր փոթորիկի մէջ կը գտնուինք, լսենք Քրիստոսի ձայնը, լսենք մեր սուրբերուն աղօթքով ու մեր նահատակներուն արիւնով շաղախուած մեր պատմութեան ձայնը՝ մի վախճաք, հաւատացէ՛ք եւ միացէ՛ք ի խնդիր Հայաստանի ու Արցախի փրկութեան:

Վեհափառ Տէր, Cilicia TV-ի անունով ջերմ շնորհակալութիւն կը յայտնենք Ձերը Սրբութեան այս սպառնիչ հարցազրոյցին համար, նաեւ՝ շնորհակալութիւն, որ ըստ աւանդութեան այս տարի եւս ամբողջ Հայ ժողովուրդին փոխանցեցիք ձեր Հայրապետական պատգամը, որ իր բովանդակութեամբ անկիւննադարձային փաստաթուղթ մըն է եւ կարեւոր նախաբան՝ 2023 տարին սկսելու Սփիւռքի վերակազմակերպական աշխատանքներու մեկնարկով, անշուշտ մեծապէս օգտուելով Ձեր երկա՛ր տարիներու փորձառութենէն ու իմաստութենէն եւ գործի վերածելով Ձեր Հայրապետական թելադրանքներն ու ուղեւորային ցուցմունքները:

ԽԱՄԱՃԻԿԵ ՌՈՒՄԲԸ...



Ս. Մահտեղեճեան

Շուէտի եւ Թուրքիոյ միջեւ դիւանագիտական սուր տագնապ յառաջա- ցաւ վերջին օրերուն, երբ խումբ մը «խենթ» քիւրտեր (Օճալանի հետեւորդ- ներ) Սթըքհոլմի մէջ գլխիվայր կախաղան հանեցին Թուրքիոյ նախագահ Էրտողանի խամաճիկը, պահանջելով, որ ան դատուի եւ դատապարտուի իբրեւ ոճրագործ-բռնատէր, մատուցի Պենիթթօ Մուսոլինիի ճակատագրին (Հիթլերի դաշնակիցը գնդակահարուած էր Բ. Աշխարհամարտի աւարտին):



Դեպքը փոթորիկ ստեղծեց ո՛չ միայն Թուրքիա-Շուէտ յարաբերու- ցանց գիծին վրայ, այլ նաեւ լայն արձագանգ գտաւ ՆԱԹՕ-ի շրջա- նակին ու միջազգային մամուլին մէջ, լուսարձակները բիրտ կերպով կեդրոնացնելով Թուրքիոյ իշխանու- թիւներուն ոճրային քաղաքականու- ցան վրայ:

Թուրքիոյ ոճիրներուն դէմ քըր- տական արշաւները նորութիւն չեն, սակայն այս անգամ (քանի՛ տրորդ

անգամ ըլլալով) լայն արձագանգ կը գտնեն միջազգային բեմին վրայ: Ին- չո՞ւ. որովհետեւ Շուէտ կ'ուզէ անդամակցիլ ՆԱԹՕ-ին, Թուրքիա վեթօ դրած էր, պահանջ ներկայացուցած էր Սթըքհոլմին, որ վերջ դնէ քրտական կազ- մակերպութեանց՝ իր հողերուն վրայ գործունէութեան ու իրեն յանձնէ կարգ մը պարագլուխներ: Շուէտ նահանջներ արձանագրած էր, տրամադրութիւն ցոյց տուած՝ ընդառաջելու Էրտողանի պահանջներուն, պատրաստ էր աչք փակելու Թուրքիոյ ոճիրներուն վրայ, եւ ահա... խամաճիկի մը կախուիլը տակն ու վրայ կ'ընէ ամեն բան, Անգարա դարձեալ կը խօսի սպառնալիք- ներով: Եփած ապուրին մէջ մեծ կաթսայով սառոյց կը թափուի:

Կարելի է երկար սիւնակներ արձանագրել Թուրքիա-Շուէտ յարաբե- րութեանց, նաեւ՝ Թուրքիոյ այս ու այլ ոճիրներուն դիմաց աչք ու ականջ փակելու արեւմուտքիներու մեղսակից կեցուածքներուն վրայ: Կրկնապէս հար- ցարան մը ցանկագրել, թէ վաղը, քիւրտերը ի՞նչ հակադարձութիւններու կրկան մատուցիլ Շուէտի մէջ կամ այլուր: Կրկնապէս նաեւ մանրամասնօրէն վերլուծել, թէ քիւրտերը ինչպիսի՞ շերտաւորումներ ունին, մէկ կողմէ սպան- դի ու բռնաճնշումներու կ'ենթարկուին Թուրքիոյ կողմէ (Թուրքիա, Սու- րիա, Իրաք), այլ գիծի մը վրայ կը գործակցին անոր հետ, սուրիական եւ իրաքեան որոշ դաշտերու մէջ, իսկ այլ գիծի մը վրայ ալ Արեւմուտքին թըմ- բուկներուն կշռոյթով կը պարեն Իրանի մէջ: Մեր նպատակը այստեղ նման քննարկումներու ու մեկնաբանութիւններու մէջ ընկղմիլը չէ, այլ շեշտել, որ քիւրտերը ԱՉԴՈՒ ՁԵԻ ՄԸ ԳՏԱԾ ԵՆ իրենց դէմ Թուրքիոյ ոճիրներուն վրայ լուսարձակ բերելու եւ Շուէտի ու անոր կողքին եղողներուն հաշիւները տակն ու վրայ ընելու համար: Անոնք հազար ու մէկ հաշիւ չեն ըներ, թէ Շուէտի վերջոյ երկար ատենէ ապաստան տուած է իրենց, այլ ԻՐԵՆՅ ՇԱՅՆ ՈՒ ԴԱՏԸ յառաջ տանելու համար, չեն վարանիր հարուած տալու Շուէտի իշ- խանութիւններուն: Եւ ահա այնպէս կ'երեւի, թէ խամաճիկ մը այնքան ազդու է, որքան ռումբ մը:

Թէ այս մէկ քայլը՝ Էրտողանի խամաճիկը կախելը վաղը ի՞նչ նոր հե- տեւանքներ կրկնայ ունենալ, ինչպիսի՞ սակարկութիւններու դուռ կրկնայ բա- նալ՝ ձգեցն ապագային, եւ խօսինք մեր՝ հայկական վիճակի դիտանկիւ- նեն:

Աւելի քան մէկ ամիսէ ի վեր, Բերձորի անցքը կղպուած է Ատրպէյճանի կողմէ, որուն ոճրային այս ու նախընթաց բոլոր քայլերուն, հեռահաս նպա- տակներուն մեղսակից է Թուրքիա, իսկ Արեւմուտքի դաշնակիցները հա- զար խօսք շռայլած են ի նպաստ Արցախին: Հայաստանի իշխանութիւնն ու ընդդիմադիր ճակատը, Արցախի իշխանութիւններն ու հայկական մար- դապիրական միաւորներ, նաեւ ռուս խաղաղապահները առաջին իսկ օրէն հեւ ի հեւ գործի լծուած են լուծում մը գտնելու համար մարդկային ողբեր- գութեան (այստեղ կանգ չառնենք այն ձախաւերութիւններուն ու քաղա- քական խաղերուն վրայ, որոնք կացութիւնը հոս հասցուցին, ոչ ալ տա- րուիք այն վեճերով, թէ ռուսական կողմը մեղսակից է թէ ցաւակից): Փաս- տօրէն, հիմա Ատրպէյճանի մէջ գերի բռնուած հայերու տագնապը յետին լուսանցք ինկած է, որովհետեւ 120 հազար արցախցիներ կը գտնուին շու- տով սովամահ ըլլալու կամ իրենց հայրենիքէն բռնի կերպով հեռացուելու վտանգին տակ, բազմաթիւ ընտանիքներ բաժանուած կը մնան...: Այդ բո- լորը կը մնան ապարդիւն, ինչպէս որ բուրջ կը մնան Սփիւռքի մէջ ծայր առած բողոքի քայլերը: Անդին, մէկ քայլ, լաւապէս ընտրուած տեղի մը տրուած փափուկ հարուած մը սպասուած լայն արձագանգ կը գտնէ, եւ... անուղղակի պատգամ մը կը հնչեցնէ, որ եթէ գտնես թշնամիիդ՝ ոճրագոր- ծին ու բռնադատողին մէկ տկար կէտը եւ հարուածդ հոն հասցնես յարմար պահուն, կրկնա շա՛տ անելի լաւ արդիւնքի հասնիլ:

Խամաճիկ մը կախելը ըստ ամենայնի այնպիսի՛ ազդեցութիւն ունե-

Թուրքիոյ նուրջ

ԹՈՒՐԷՈՅ ՄԵՋ (ԱՐԵՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇՐՋԱՆԸ- «Գ.» ԽՄԲ.) ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԱԾ Է ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԳԵՐԵՉՄԱՆՈՑ

«Էրմէնի Հապէր»- Վանի թանգարանի տնօրէն Ֆաթիհ Արաք եւ տեղ- ւոյն համալսարանի գրականութեան ճիւղի հնաբանութեան բաժնի ղե- կավար, փրոֆ. Ռաֆէթ Չաւուշօղլու տարածաշրջանի պատմական կա- ռոյցներու ամրապնդման աշխատանքներու շրջագիծին մէջ հետազօտու- թիւն իրականացուցած են որպէս մշակութային անշարժ ժառանգութիւն գրանցուած մաղավան- քի տարածքին մէջ:



Աշխատանքներուն ընթացքին Վանայ լիճին ջուրի մակարդակը իջ- նելուն հետեւանքով յայտնաբերուած Էուրար- տական շրջանի գե- րեզմանոց մը, որ ունի 3 առանձին սենեակա- տիպ հատուածներ:

Հետազօտողներէն Չաւուշօղլուն դիտել տուած է, որ ուրարտական շըր- ջանին յատուկ դասական գերեզմանոց է, որուն մէջտեղի սենեակը համե- մատաբար մեծ է, իսկ յարակից սենեակները՝ փոքր: Գերեզմանի պատին վրայ յայտնաբերուած է 3 բացուածք, որ նախատեսուած է նուէրներու համար:

Հնաբանները նշած են, որ առաջին անգամ նմանատիպ գերեզմանոց կը պեղեն:

ցաւ, որքան պիտի ունենար թրջական հաստատութեան մը ականահարու- մը կամ պետական ոճրագործի մը մահապատիժի ենթարկումը: Այլ խօս- քով, երբ մարդիկ կ'ըսեն, թէ թուրք-ագերիական գրաւումներն ու բռնա- րարքները, նոր ցեղասպանութեան մը հողի պատրաստութիւնը կարելի է հակակշռել եւ կետեր շահիլ



ԳՐԾՆԱԿԱՆ ԶԱՅԼԵՐՈՎ, նման կոչերու ետին ան- պայման գէնքով ու ռում- բով արարքներու հրահրում պէտք չէ տեսնել (թէեւ անի- կա ալ իր տեղն ու ազդե- ցութիւնը ունի, անկախ ան- կէ, թէ Հայաստանի մէջ կան «Նեմեսիս»-ը քննարկման առարկայ դարձնելու պատրաստուող թրջամոլ տիմարներ...):

Օտարները առած մը ունին. «Ամէն բան արդար է սիրոյ եւ պատերազմի մէջ»: Մեր հայրենապաշտ- պանները այս խօսքին իմաստը քաջ գիտցած են անցեալին, գործած են «Մէկ բռունցքը հազար բա- ռէն անելի ուժեղ է» տրա- մաբանութեամբ, մերժած են «գիջիկը, գիջիկը, հանդուրժենք, խաղաղու- թիւն մուրանք» (ան)սկզբունքները: Մեր քաջերէն շատեր դիմած են «խենթ» արարքներու, որովհետեւ փորձը ցոյց տուած է, թէ խենթին գլորած քարը երբեմն հազար խելօք չեն կրկնար վերցնել:

...Որքա՞ն կարելի է դիտող մեկնաբան մնալ, որքան ալ որ ճիշդ ըլլան մտածումներն ու հայեցակետերը: Արցախի փրկութիւնը, Հայաստանի կորստեան կանխարգիւծումը եւ ընդհանրապէս կորուստներուն վերականգ- նումը երբեմն կը կարօտին «խենթ» ու ցաւցնող արարքներու: Իսկ մեր ժո- դովուրդը միշտ ալ պաշտած է նման «խենթեր», ձեռքերը միացուցած է անոնց զօրակցելու համար:

www.kantsasar.com

Պիստակետ

ԽԱՌՆ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ



Մարուշ Երամյան

Խառն ամուսնությունները, արեւմտահայերէնի հարցերուն հետ կը մնան թե՛ Եւրոպայի հարցեր մեզի համար: Սիրտ մաշեցնող հարցեր, որոնք կը դառնան մեր գրեթէ բոլոր հանդիպումներուն առանցքը:

– Եթէ գաւակներդ ալ օտարներու հետ ամուսնանան...

Կրնայ ըլլալ. ոչ ոք պաշտպանուած է այս ախտին դէմ, որովհետեւ հակադէղը տակաւին չենք գտած:

Բայց այսքանը չէր գրուեր եթէ ակնատես վկան եղած ըլլայի հայ երիտասարդի մը հայ ընտանիք կազմելու ճիգերուն:

Այդ հայ երիտասարդը, հակառակ լրիւ օտար շրջապատի մը մէջ ապրած ըլլալուն, ճիգ չէր խնայեր ծանօթանալու եւ կապուելու հայ աղջկայ մը հետ, ընտանիք կազմելու համար:

Բայց քանի մը հայ աղջիկներու հետ ունեցած փորձառութիւնը ցոյց տուաւ որ հայ օրիորդը ընդհանրապէս մէկ ու միակողմանի դիտանկիւն ունի՝ թեկնածուին հարստութեան չափը, որուն հետեւանքով հայ երիտասարդը ինքզինքն իրաւունք կու տայ «ընտրելու շուկային լաւագոյնը»՝ գեղադէմ եւ գեղամարմին հայուհի մը:

Յետեւա՞նքը:

Ճիշդ գուշակեցիք՝ օտար ամուսնութիւններ, կամ՝ ամուսնալուծումներ:

Պարզ տրամաբանութեամբ՝ եթէ հայ օրիորդը չի գիտեր գնահատել Եւրոպայի արժանիքները (որոնք մաս չի կազմեր գեր-հարստութիւնը), ուրեմն երիտասարդները կ'ուղղուին հոն, ուր կը գնահատուին իրենց արժանիքները: Գրեթէ նոյն պատճառներով է, որ հայ երիտասարդները կ'ուղղուին այլ դաւանանքներու, մանաւանդ անոնցմէ մեկուն, որ խորքին մէջ աղանդաւորական կը համարենք մենք՝ մորմուսականութեան:

Ըսել չէ անշուշտ, որ բոլոր երիտասարդուհիները նոյն ախտէն կը տառապին, բայց, ինչպէս հայաստանցիք կ'ըսեն՝ «լաւերը ջրի երես չեն»: Այս երիտասարդուհիները, ի չգոյ՛ է հայ երիտասարդներու, որոնք օտար ամուսնութիւններ կը կնքեն, կը դատապարտուին կամ միանակ ապրելու, կամ իրենք եւս օտար ամուսնութիւններ կը կնքեն:

Այս բոլորը տեսական կարծիքներ չեն, մտացածին հեքիաթներ չեն: Իրապէ՛ս տեղի ունեցած դէպքեր են:

Մեզի համար դժբախտութիւն է այն, որ տարբեր դաւանանքներու եւ տարբեր ազգերու երիտասարդներ ճիգ չեն խնայեր հայ աղջիկներուն տիրանալու համար, մանաւանդ Սփիւռքի մէջ, տարբեր պատճառներով:

Ա. Յայերը իրենց մէջ ձուլելու եւ անոնց հարստութեան տիրելու համար, ինչպէս է պարագան Եգիպտոսի դպտիներուն:

Բ. Յայ աղջիկները գեղակի են, տանտիկին են, ընտանիքին տեր կանգնող են, աշխատասեր են եւ այլն:

Գ. Արեւելքի պարագային՝ քրիստոնէայ աղջիկները իսլամացնելու համար:

Մեր թապուներէն մէկն է ասիկա, որուն մասին ընդհանրապէս կը գուշանանք խօսելէ, կամ ալ պարզապէս ա՛լ յոյս չունինք, որ խօսելով կրնանք բան մը փոխել, հետեւաբար կը լռենք:

Բայց եթէ կ'ուզենք լուծումներ փնտռել – կրնանք նաեւ չգտնել – պէ՛տք է արծարծենք այս հարցը, որ հարց ըլլալէ շատ աւելի անդին է, դարձեր է ցաւ, սրտմաշուք, հոգին հիւժո՞ղ ախտ:

«Արեւելք»-ի (Իսթամպուլ) մէջ լոյս տեսած Ալպէն Բէշիշի յօդուածը՝ «Մտորումներ Պոլսահայոց Խառն Ամուսնութիւններուն Մասին» ճիշդ այս հարցին կ'անդրադառնայ, բայց այնտեղ նկատի առնուած է միայն պոլսահայոց պարագան, որ կարգ մը կէտերու մէջ շատ նման է այլ գաղութներու պարագային, ինչպէս օրինակ գաղութներուն աւանդական մթնոլորտն ու անոր հակադրուող «այլ»-ին «արդիականութիւնը»:

«Այլը» գլխաւոր, թերեւս միակ եւ բազմաճանկ խոչընդոտն է այս հարցին, որ ոչ միայն ուշացեր ենք արծարծելու, այլ մանաւանդ լուծելու: Այսօր չի՛ բաւեր խօսիլ այդ մասին: Այսօր արագ, հիմնաւոր, Եական լուծումներ պէ՛տք են:

Այս օրերուն, երբ Արցախը բռնկած է եւ անոր հրդեհով բռնկած է Սփիւռքը, թերեւս շատերու համար անհեթեթ թուի այս հարցը բարձրացնելը:

Բայց մեր պայքարը նաեւ ԹԻԻ պայքար է. ճիշդ է որ շատ մեծ անուններ ունինք միջազգային երկնակամարին վրայ, մշակութային, արուեստի, գրականութեան եւ գիտութեան ոլորտներուն մէջ, բայց անունով ո՛չ հող կ'ազատագրուի, ո՛չ հող կը պահուի: Ճիշդ է նաեւ, որ միշտ փոքր եղեր է մեր թիւը, բայց միշտ եղեր ենք պայքարող ժողովուրդ: Եթէ դարերու ընթացքին կորսնցուցեր ենք մեր մարտունակութիւնը, այսօր իրաւունք չունինք թիւ կորսնցնելու:

Օտար ամուսնութիւն կը նշանակէ աւանդութիւններէ հեռացում, լեզուական նահանջ, իսկ այս երկուքը իրենք են, որոնք իրենց մէջ կը կրեն մեր՝ հայու «տեսակ»ը: Չի՛ բաւեր լեզուի մասին գեղեցիկ յօդուածներ ստորագրել, պէ՛տք է քաջաբար ընդունինք մեր պարտութիւնը եւ յետոյ նոր թափով լծուինք մեր հարցերուն լուծումներ գտնելու աշխատանքին:

Ալպէն Բէշիշի յօդուածը կարծես արդարացումներ կը փնտռէ, օտար

ամուսնութիւններու պատճառները թուելով պատճառաբանութիւններ կը ներկայացնէ:

Ի՞նչ ընէ սակայն:

Իրապէ՛ս դժուար կը թուի, մանաւանդ ամուսնութիւններու պարագան: «Մերը ազգութիւն չի ճանչնար»: Ի՞նչ լաւ պիտի ըլլար, եթէ սիրոյ բազմաթիւ հեքիաթներն ու պատմութիւնները «And they lived happily ever after» բառերով չվերջանային, այլ վարագոյրը կամացուկ մը վերցնէին ever after-ին վրայէն ու տեսնէինք թէ ինչեր տեղի կ'ունենան իրական կեանքին մէջ:

Ի՞նչ ընել ուրեմն:

Պեղել: Պեղել երեւոյթը իր ամբողջութեամբ, մաքրել արդարացումներու հողը, պատճառները դիտել որպէս պատճառ եւ ոչ՝ պատճառաբանութիւն, եւ ամենէն կարելորդ՝ աշխատանքը սկսիլ սերունդին մանուկ տարիքէն:

Ամուսնութեան մասին խօսի՞լ մանուկ տարիքէն:

Սիրոյ՝ մասին խօսիլ եւ գօրացնել (կամ սերմանել) մանուկին մտածելու կարողութիւնը:

Մտածելը պիտի հասնի գիտակցութեան. Մանուկը, պատանին, ի վերջոյ պիտի հասկնայ թէ ինչո՞ւ հայերէնի դասերը պէ՛տք է լաւ սորվի, պէ՛տք է գուրգուրայ իր հայութեան վրայ եւ ինչո՞ւ հայ կողակիցով ընտանիք պէ՛տք է կազմէ:

«Այս բոլորը պարագայ բաներ են...»:

Յաճախ մեր առօրեան ալ պարագայ բաներէ կազմուած կ'ըլլայ՝ կողակիցին հետ հայերէնով վիճիլ, միասնաբար Վահէ Պերպերեան, Փիեռ Շամմասեան կամ Գրիգոր Սաթամեան դիտել, նոյն անեքթօտը լսելով ծիծաղիլ, գաւակներուն հայկական անունները տալ եւ հայկական հեքիաթներ պատմել, – եթէ տակաւին հեքիաթ պատմող մայրեր եւ մեծ մայրեր կան:

Երբեմն կը մտածեմ՝ հարիւր տարի եւ աւելի ապրեցանք, երբ, ըստ պայմաններուն, պէ՛տք էր մեռնէիք. հարիւր տարի եւ աւելի ապրեցանք, որովհետեւ մեզի տրուածն ու մեր ունեցածը գուրգուրացինք, փոխանցուած ջահը վառ պահեցինք: Յարիւր եւ աւելի տարի ետք նոր հարիւրը կը սկսի ներկայէն. կրնայ չսկսիլ, որովհետեւ դպրոցներ կը փակուին, խառն ամուսնութիւններէ ծնած մանուկները կը կորսնցնեն հայու տեսակին նոյնիսկ արտաքինը, գանկին ձեւէն մինչեւ մորթին գոյնը:

Ինչո՞ւ այս առօրեական հմայքը այլով: Առօրեական կ'ըսեմ, որովհետեւ առօրեայէն դուրս, երբ կը խօսինք ազգ-ոգի-հայութիւն կիրթնելու շուրջ, ընդհանրապէս մեր կեցուածքը լրիւ տարբեր է՝ հայ ենք 100%, կու տանք մեր ունեցածն ու ունեցածէն աւելին, պատրաստ ենք գոհուիլ այս սուրբ եռեակին համար՝ հայ ոգի, հայութիւն, հայրենիք:

Ի՞նչ կը պատահի ուրեմն, երբ առօրեային դառնանք:

– Յայկական դպրոցներուն ծրագիրը շատ ծանր է, շատ խճողուած է, արդիական չէ, հայերէնի ուսուցչուհիները լաւ չեն ...

– Ինչպէ՛ս ընտրութիւն ընեմ մէկ, երկու, շատ-շատ երեք թեկնածուներու միջեւ. հարիւր օտարին մէջէն շատ աւելի դիւրին է ընտրութիւն կատարելը:

– Մեր մակարդակին համեմատ ուրկե՞ թեկնածու գտնենք մեր աղջկան համար ...

Ատնցմէ մէկ քանին ընդունելի պատճառներ են, մնացեալը՝ պատճառաբանութիւն:

Բայց չեմ կրնար չյիշել Խաչատուր Աբովեան, Դանիէլ Վարուժան, Ռուբէն Սեւակ, Արամ Խաչատրեան, Գարգու, Գուրգէն Մահարի, մինչեւ ժամանակակից հայեր ինչպէս Արմէն Յախնազարեան եւ շատ ու շատ անուններ:

Ինչո՞ւ այս անունները կողք կողքի կը դնենք, ի՞նչ է անոնց հասարակ այտարարը:

Օտար կողակիցը:

Այս դէմքերը սակայն չափանիշ չեն, այլ՝ բացառութիւն:

Երեք կարելորդ կէտերով թերեւս կարելի ըլլայ լուծում մը գտնել.

1- Նոր սերունդին հետ աշխատելու խիստ ուսումնասիրուած ծրագիր ստեղծել:

2- Այլին հետ յարաբերելու ձեւ որդեգրել, չիլնալու համար երկու ծայրայեղութիւններէն մեկուն՝ ընկերային փակուածութեան կամ լրիւ այլի հմայքին յանձնուելուն վիճիլ:

3- Գիտակցութիւն արթնցնել:

Ատնց կարելի է երկար եւ հանգամանալի ձեւով անդրադառնալ:

1-Նոր սերունդին հետ աշխատելու խիստ ուսումնասիրուած ծրագրին գոյութեան եւ յաջողութեան պարագային (կրնայ նաեւ ծախսողութեան մատնուիլ), երկրորդ եւ երրորդ կէտերը կիսով լուծուած կրնան համարուիլ:

Այս էութեանական հարցին մասին կրնայինք խօսելու պէ՛տք չունենալ, եթէ խառն ամուսնութիւններու մեծ տոկոս մը ըլլար մեր գաղութներէն ներս, ինչ որ կը հաստատէ մեր շատ ուշացած ըլլալը այս կարեւոր խնդրին լու-



ԱՄԱՆՈՐԻ ԳԻՇԵՐ, ԱԼ ՄԻ՛ ՎԵՐԱԴՂԱՌՆԱՐ



Սեան Ա. Մանճիկեան

Նոր Տարին սրտիս ամենամոտիկ տօներէն մին էր. զայն մանուկի անհամբերութեամբ ու եռանդով կը սպասէի ամէն տարի:

Նոր Տարուան գիշերը բոլոր բնակարաններու սեղանները տարբեր ճոխութեամբ լեցուն կ'ըլլան, սակայն այդ ճոխութիւնը անիմաստ կը դառնայ առանց այդ սեղաններուն շուրջը խմբուող հարազատներուն, որոնք ամբողջական իմաստ կու տան տօնական օրերուն:

Նոր Տարուան գիշերը այդ սեղանին շուրջ հաւաքուելով, մտերմիկ գրոյցներով, ապա եկեղեցի այցելութեամբ, տարուան առաջին վայրկեանները կը դիմաւորէինք աղօթքով, որպէսզի տարուան օրերը Աստուծոյ օրհնութեամբ լեցուն էին:

Կաղանդ Պապան դիմաւորելը, անոր նուէրներուն տոպրակով հրճուիլը ու տակաւին շատ ու շատ սովորոյթներ Նոր Տարուան գիշերը իւրայատուկ տօնի կը վերածէին:

Եկուր տես, որ վերջին այս քանի մը տարիներու Նոր Տարուան ուրախութիւնը հարիւրութիւն աստիճան փոխուեցաւ ինծի համար: Կարծեք Նոր Տարուան գիշերը դիմաւորելը մտահոգութիւն ու հոգ դարձաւ ու չընթացաւ սրտիս ու կուրծքիս վրայ՝ Կասիոս լերան ծանրութեամբ:

Քանի մը ժամ ու Նոր Տարին կը հասնի: Լաւատեսութեամբ Նոր Տարուան առաջին ժամերը դիմաւորելու կը պատրաստուիք տոկուն կամքով, հակառակ մեզ շրջապատող բոլոր դժուարութիւններուն:

Մէկ շաբաթ առաջ սկսած էինք պատրաստութիւնները: Թէ ինչպէ՛ս եւ ինչո՞վ պիտի գարդարէինք Նոր Տարուան սեղանը չէինք գիտեր: Ամէն տարուան ճոխութիւնն ու բազմազանութիւնը չկային այս տարի, բայց ի՞նչ հոգ, սրտի ուրախութիւնը ո՛չ ուտելով, ոչ ալ գարդարանքով է: Այս համոզումով փորձած էինք թեթեւօրէն տանիլ ստեղծուած ծանր պայմանները: Թող մեր առողջութիւնը լաւ ըլլայ «Ա՛ս ալ կ'անցնի» ըսելով:

Նոր Տարուան գալուստը որքան մօտենար, դուրսը պայթուցիկներու ձայնը այնքան կը սաստկանար: Սովորաբար կեանքիս տարատեսակ պայմաններն ու դժուարութիւնները թեթեւօրէն կը տանիմ ու կեանքը սիրելով կ'ուզեմ խաղաղ ապրիլ, սակայն հրավառութեան պայթիւնները հոգիիս անդորրութիւնը կը խանգարէին: Մանաւանդ Զեսայի տեղահանութեան տարիներէն ետք: Անոնց ո՛չ ձայնը, ոչ ալ յառաջացուցած վախը կըրցած էի յաղթահարել: Միտքս հանգիստ է, Աստուծոյ տնօրինումին կը վստահի, սակայն մարմինս ու զգացումներս ենթագիտակցութեանս հետ միասին խելքի չեմ գար:

Չէ՛, չէ՛, մի՛ կարծեք թէ չեմ փորձած յաղթահարել այս սարսափը: Խօսիլը դիւրին է, ով գիտէ թէ այլոց սրտին մէջ ի՞նչ կայ, կամ ի՞նչ պայմաններէ անցած է մեզմէ իւրաքանչիւրը:

Հրացաններու կրակոցները կը սկսին, ժամը 12:00-ին քանի մը վայրկեան կը մնայ: Սիրտս արագ-արագ կը սկսի տրոփել, որը մարմինս վախի սարսուռ մը կ'անցնի: Սովորական հրավառութիւն չէ, հրթիռի պայթիւն է... Բայց պետք է հանդարտ ու անվախ մնալ՝ տղուս, հարսիս, ամուսինիս համար եւ մանաւանդ երկու թոռնիկներուս համար, որոնք փոքր են, մէկը վեց տարեկան, միւսը՝ երեք: Անոնց ուրախութիւնը պետք է խանգարել, ուրեմն պետք է ուրախ ու անհոգ

ձեւանալ:

Ժամացոյցի սլաքները որջագուրուած ու միացած գիրար կը շնորհաւորեն ու կ'աւետեն Նոր Տարուան ժամանումը: Դուրսի պայթիւնները աւելի ու աւելի կը բարձրանան ու կը սաստկանան: Եկեղեցի երթալը անհնար է, ապահով ալ չէ: Այս անգամ ես կը զրկուիմք տարիներու մեր սովորութենէն ու... կրկին գօրաւոր պայթիւն:

- Եկե՛ք գետնայարկ իջնենք, Նայիք աստիճաններուն վրայ Կաղանդ Պապային նուէրներու



տոպրակէն նուէր մը ինկա՞ծ է արդեօք: Պզտիկ թոռնիկս շալկած վար կը փութամ: Ձեռքիս մէջ ամբողջ սեղմած բջիջայինիս զանգը կը հնչէ: Ինքզինքս հաւաքելով կը պատասխանեմ զանգին. աղջիկս է՝ Լիբանանէն:

- Շնորհաւոր Նոր Տարի, մա՛մ, բարի տարիներ, առողջ օրեր կը մաղթեմ ձեզի... բայց վայրկեան մը, ո՞ւր էք, նորէն վար իջած էք: Լա՛ւ, լա՛ւ, հասկցայ, քիչ ետք կը հեռաձայնեմ:

Չաւակներս շատ լաւ ճանչցած ու հասկցած էին զիս, գիտէին հոգեվիճակս:

Կրկին բջիջայինիս ձայնն էր, մայրս էր՝ Զեսայէն: Մեր Նոր Տարին կը շնորհաւորէր, նոյն յուսախաբութեամբ ու սրտի կսկիծով ան ես խօսակցութիւնը չշարունակեց... Անոր յաջորդեց տալոյցս զանգը՝ Հայաստանէն եւ եւ եւ...:

Չորս կողմը խաղաղէլ է ետք տուն բարձրացանք. փորձեցի տրամադրութիւնս բարձր պահել զէք երիտասարդներուն ու թոռնիկներուս համար:

Շրջան մը հագիւ միտքս ու սիրտս խաղաղած էին, հիմա անոնց մէջ ծովու այնպիսի փոթորիկ մը յառաջացաւ, որ կարծեք քիթս բռնած ըլլար: Կը փորձեմ խորունկ ներշնչել, թոքերուս թթուածին հասցնել: Իսկ միտքս այդ ալիքներուն մէջ կը խեղդուի:

- Ի՞նչ կ'ընէք դեռ մինչեւ հիմա Զեսայ:
- Կարօտը խեղդեց մեզ:
- Ալ ի՞նչ կը սպասեք:
- Ինչո՞ւ խաղաղ կեանք մը չէք ուզեր ապրիլ:

- Աս պզտիկները իրաւունք ունին երջանիկ մանկութիւն մը վայելելու:

Անվերջ հարցումներ ու հարցադրումներ, որոնց պատասխանը ես ալ չունիմ, անոնց տարափը գլխապտոյտս կը կրկնապատկէ:

Մէջս եղած մանուկը կ'արթնայ ճարահատ, երկու ձեռքերս իրար միացուցած, թոռնիկիս սորվեցուցած Մ. Իշխանի «Նամակ Կաղանդ Պապային» բանաստեղծութեան տողերը կը մտաբերեմ. «Աստուած պապա, Կաղանդ պապա, Տէր պապա, մերթ բացակայ, մերթ ներկայ»:

Աստուած պապա, դո՛ւն որ միշտ ներկայ ես ու զիս կը լսես: Ալ նուէր չեմ ուզեր, պարզապէս առողջութեան կողքին խաղաղութիւն կ'երագամ:

ԼԱՐՈՎ «ՊԵՏԵ ԶԵ...

Սկիզբ՝ էջ 1

Լարով դիտել տուաւ, որ արեւմուտքը ինքզինք արդարացել փորձելով յաճախ կը յայտարարէ, թէ տնտեսական պատժամիջոցները որքան է ազդեցութիւն ունին Սուրիոյ ժողովուրդի առօրեային վրայ, ինչ որ իրականութեան հետ ոչ մէկ առնչութիւն ունի: Ան շէշտեց, որ մարդասիրական օժանդակութիւններու ընթացքը կարելի չէ քաղաքականացնել, իսկ Սուրիոյ ժողովուրդին տրամադրուած մարդասիրական օժանդակութիւնները, մեկնելով ՄԱԿ-ի չափանիշերէն, շատ քիչ կը համարուին, կարելի է ըսել բնակչութեան կարիքին կէտը կը կազմեն:

Լարով այնուհետեւ անդրադարձաւ Սուրիոյ վերականգնումի աշխատանքներու շարունակման կարեւորութեան, յայտնելով, որ այդպիսով միայն կարելի կը դառնայ Սուրիոյ տնտեսութիւնը վերակենդանացնել:

Այս առիթով Լարով շէշտեց, որ անհրաժեշտ է ՄԱԿ-ի յարկէն ներս որոշումներ գոյացնել այս հարցերուն շուրջ եւ հետաքրքրութեան արժանացնել Սուրիոյ ժողովուրդին դիմագրուած սոսկալի տագնապին յաղթահարման ելքերը:

ՇՆՈՐՀԱՊՐԱԿԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Կեանքի գոյութեան սպառնացող վտանգներուն, յուսալով, որ Աստուծոյ օգնութեամբ Հայաստանի եւ Արցախի քաղաքագետներու եւ դիւանագետներու իմաստուն ջանքերով եւ աշխատանքով հարցերը իրենց բարօր լուծումին յանգին:

Առաջնորդ Սրբազան Հայրը Բերիոյ Հայոց Թեմին ամբողջական գօրակցութիւնը յայտնեց Արցախին եւ արցախահայութեան:

Սրբազան հայրը գնահատեց հիւպատոսութեան անձնակազմը եւ մարդասիրական առաքելութեան խումբի մասնագետները՝ իրենց մատուցած ծառայութիւններուն համար եւ բարեյաջող գործունեութիւն մաղթեց անոնց:

ԱՐՃԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Կամարտութիւնների կարգաւորմանն ուղղուած միջազգային կառոյցների՝ տարբեր երկրների ջանքերը:

2020-ի Նոյեմբերի 9-ի յայտարարութեան կողմեր հանդիսացող Հայաստանի Հանրապետութեանը՝ Ռուսաստանի Դաշնութեանը կը չենք անում հրատապ միջոցներ ձեռնարկելու Արցախը ապաշրջափակելու՝ մարդկային աղետը կանխելու համար:

Յորդորում ենք միջազգային կառոյցներին եւ ՄԱԿ-ի անդամ երկրներին յայտարարութիւններին եւ կոչերին գատ գործնական քայլերով կանխել Ատրաբեյճանի ցեղասպանական գործողութիւնները:

Արցախի Հանրապետութեան առջեւ ծառայած մարտահրաւերները արժանապատուութեամբ յաղթահարելու նպատակով դիմում ենք համայն հայութեանը՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու սանձելու Ատրաբեյճանի յարձակողական գործողութիւնները՝ պաշտպանելու սեփական հողում ապրելու արցախահայութեան օրինական իրաւունքը:

«Ազատ Հայրենիք-ԶՄԴ» խմբակցութիւն

«Միասնական հայրենիք» խմբակցութիւն

«Արդարութիւն» խմբակցութիւն

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն»

խմբակցութիւն

«Արցախի ժողովրդավարական

կուսակցութիւն» խմբակցութիւն

Ստեփանակերտ

18/01/2023

ԽԱՌՆ...

Մկհրթ՝ էջ 7

Ծումներ գտնելու համար: Ընտանիք մը եթե հայկական առօրեայ եւ կենցաղ ունի, արդէն ինքնաբերաբար հայկական կենսա-ծեւով եւ մթնոլորտի մէջ կը դաս-տիարակէ իր գաւազները: Այս ծրագրին մէջ, հայկականութեան կողքին այլ կետերու ալ կարելի է անդրադառնալ, ինչպէս օրինակ կողակից մը ընտրելու սկզբ-բունքներ, կեանքի երազներ, հարցում հարցնելու - մտածելու - մտիկ ընելու, իմանալու եւ նման ունակութիւններ: Նման աշխատանք կը տարուի դպրոցէն դուրս ակումբներու, կամ կանոնաւոր հերթականութիւն ունեցող հաւաքներու ընթացքին, ինչպէս սկաւտական շարժում, կիրակնօրեայ դպրոց եւ այլն: Հաւանաբար շատ դժուար ըլլայ այս բոլորը ջանքել այնպիսի սերունդի մը, որ մանկութենէն իսկ cyber խաղերով տարուած, ոչ միայն կեդրոնաւարու հարց ունի, այլ նաեւ անփոյթ է եւ անտարբեր: Հակառակ դժուարութեան, ի հեճուկս դժուարութեան, պարտաւոր ենք արա-

գօրէն լուծումներու հասնիլ, որովհետեւ խառն ամուսնութիւններու պատճառով է որ մեր ինքնութիւնը սկսած է ձեւափոխուիլ: 2-Այլին հետ յարաբերելու ձեւ Չապրիլ հայրենի հողին վրայ, խեղդով օտարութեան մէջ, լեզուն միջեւ հեռատեսիլ, իսկ գիշերները, երբ նստիլ հեռատեսիլին առջեւ ու յիշել - կամ չյիշել - որ հայ ես ... դժուար բան է, շատ դժուար: «Փարիզի տղաք»-ը առաջիններն էին, որ ապրեցան այս դժուարութիւնը դեռ 1930-ականներուն, գրեցին այդ մասին, բայց հոգեկան տառապանքը, յաճախ մարմնակա-նի վերածուած, զգեստնեց գիրքն: Այսօր թեւ աւելի գորաւոր եւ գիտակ արդիական բոլոր միջոցներուն, մեր ներքին գրահը հիմնական ճաքեր ունի, որովհետեւ չունեցանք այլին հետ յարաբերելու կայուն ուղի մը: 3-Գիտակցութիւն «Կրկնութիւնը մայրն է ամէն գիտութեան» «Գիտութիւնը մայրն է ամէն իմացումի» «Գիտակցութիւնը մայրն է բո-լոր դժուարութիւններուն յարթահարումի»: Դժուար, շատ դժուար, բայց կարելի աշխատանք:


ԸՆԿՅ. ԱՐՓԻ...

Մկհրթ՝ էջ 12

Արփին դարձեալ պատնէշի վրայ էր իր ընկերուհիներով, հոգալու անոնց կենցաղային, առողջապահական եւ այլ կարիքները: Ընկ. Արփի իր ժրջան աշխատանքով ու վարակիչ աշխուժութեամբ օրինակ դարձաւ միութենական իրերայաջորդ սերունդներուն, որոնք հակառակ Սուրիոյ տագնապալի օրերուն շարունակեցին կանգուն պահել նուիրական այս միութիւնը իր տարածուն գործունեութեամբ, մասնաճիւղերու համակարգով եւ անդամներու պատուաբեր վաստակով: Ան երկարամեայ իր ծառայութեամբ, նուիրեալ միութենականի գիտակցութեամբ եւ դեկավարի հմտութեամբ դարձաւ հալեպահայ գաղութի ողնասիւններէն մէկը, եզակի անձնաւորութիւն մը, որ վայելեց համայնքին յարգանքը, թէ՛ որպէս մանկավարժ, թէ՛ որպէս ազգային հասարակական գործիչ, նուիրեալ միութենական եւ հաւատաւոր Դաշնակցական: Ան արժանաւոր ժամանակորդն էր իր հօր՝ կուսակցական գործիչ Սիմոն Արսլանեանի, որ Յեղասպանութենէն փրկուելով մեծ նպաստ ունեցած էր ՀՀԴ-ի Սուրիոյ ու յատկապէս Հալեպի կազմակերպական կառոյցի յառաջացման մէջ: Ընկ. Արփի, որպէս առաջին սուրիահայ կուսակցական ընկերուհի, ջանք ինչպէս հալեպահայ երիտասարդուհիները մղելու, դառնալու միութենականներ՝ հանդիսանալով առաջին կին կուսակցականը, որուն կնքամայրութեամբ ՀՀԴ Սուրիոյ շրջանի շարքերը համալրուեցան երիտասարդուհիներու առաջին խումբով, որոնք իրենց դաշնակցականի երդումը տալով իրենց կարգին կամաւոր ծառայութեամբ գործի լծուեցան ՀՀԴ շարքերէն եւ ուղեկից միութիւններէն ներս ստանձնելով պատասխանատու պաշտօններ: Այս բոլորի կողքին, Արփի Սապունճեանը եղաւ հոգատար մայր իր գաւազներուն՝ Մարիային, Արտային եւ Լորիկին, պարտաճանաչ տանտիկին ու կողակից իր ամուսինին՝ Չաւենին, որուն հիւանդութեան տարիներուն, ստանձնեց անոր

խնամատարութիւնը հրաժարելով մանկապարտիզ պանուհիի իր պաշտօնէն: 2012-ին Արփի Սապունճեան տեղափոխուեցաւ Լիբանան այնուհետեւ Քանաթա, միանալու իր երեք դուստրերուն եւ անոնց ընտանիքներուն, մասնաւորաբար եօթ թոռներուն՝ Գեորգին, Պաղտիկին, Կարիկին, Յովսէփին, Անտրե-Արմենին, Հրակին ու Արէնին: Արփի Սապունճեան մահացաւ 87 տարեկանին Մոնթրէալի մէջ, Քանաթա, 11 Յունուար 2023-ին, իր ետին ձգելով երկար տարիներու վաստակ: Ընկ. Արփիի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ 14 Յունուար 2023-ին, Մոնթրէալի Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ մէջ: Յուղարկաւորութեան կարգը գլխաւորեց Սուրբ Յակոբ եկեղեցւոյ հոգեւոր տեսուչ, Բերիոյ թեմի երկարամեայ Առաջնորդ Սուրբ Արք. Եպս. Գաթարոյեան: Արարողութենէն ետք, ՀՕՍ-ի Քանաթայի Շրջանային Վարչութեան անունով դամբանական արտասանեց Շրջանային Վարչութեան ատենապետուհի Լուսին Ժամկոչեան-Փայլանճեան, որ ընկերուհիին միութենական երկարամեայ ծառայութեան անդրադառնալու կողքին, փոխանցեց յուշեր եւ վկայութիւններ: ՀՀԴ «Սարգիս Չէլչեան» Կոմիտէի անունով դամբանական արտասանեց կոմիտէի ներկայացուցիչ Վրէժ Հատիտեան, որ իր կարգին անդրադարձաւ ընկերուհիին ծաւալած կուսակցական գործունեութեան: Ընկ. Արփիի ընտանիքին անունով սրտի խօսք արտասանեց դուստրը՝ Լորիկ Սապունճեան-Ծատուրեան, որ իր խօսքին մէջ նշեց, որ ընկ. Արփիին կորուստին ցաւը միայն իր ընտանիքին չէ, այլ բազմաազար հայորդիներու, որոնք ընկ. Արփիին ճանաչած են, որպէս մանկապարտիզ պանուհի, կրթական մշակ, դաստիարակ, ծառայատէր խաչուհի, նուիրեալ միութենական ու կուսակցական: Յուղարկաւորութենէն ետք, ընկ. Արփիի մարմինը հարազատներու եւ սգակիրներու ընկերակցութեամբ, տեղափոխուեցաւ Լաւալի Les Jardins Urgel Bourgie գերեզմանատունը, եւ հողին յանձնուեցաւ «Վերքերով Լի»-ի երգեցողութեամբ:


«Գանձասար» շնորհակալութեամբ ստացաւ Գեորգ Պետիկեանի



«ՄՓԻՒՔԸ...»


գիրքը: Տպուած ԱՄՆ, 2022-ին: 201՝ Հալեպի Ազգային Քարէն Եփփէ Ընմարանի Հիմնադրութեան 75-ամեակին:

«Գանձասար» շնորհակալութեամբ ստացաւ Սուրիահայ Օգնութեան Խաչի 2023-ի տարեկան օրացոյցը:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Հանգուցեալ ԱՌԱՔԵԼ ԻՍՐԱՅԷԼԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Բ. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 29 Յունուար 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Հալեպ:

«ԳԱՆՁԱՍԱՐ» ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիվբոջեան-Պողիկեան
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիվբոջեան
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Ձեր յամառ աշխատանքին շնորհիվ փայլուն արդիւնքներու պիտի հասնիք: Ծամբորդութեան ծրագիր մըն ալ պիտի իրագործուի այս շրջանին:



Ցուլ

Անիրաժեշտ է, որ երբեմն գիշիք եւ գոհեք ձեր սեփական սկզբունքները՝ մօտիկ մարդոց հետ յարաբերութիւնները պահելու համար: Ձեր առողջութեան հոգ տարէ՛ք եւ հանգստացէ՛ք:



Երկուորեակ

Եթէ քիչ մը ջանք թափեք՝ մեծ յաջողութիւններու կրնաք հասնիլ: Ձեր ամենօրեայ խնամքին հոգ տարէ՛ք եւ ֆիզիքական վարժութիւններ կատարեցէ՛ք:



Խեցգետին

Այս շրջանը նպաստաւոր է ուսման համար: Ձեր ուժերը հաւաքեցէ՛ք եւ նիւթական գետնի վրայ ցանկալի արդիւնքի պիտի հասնիք:



Առիծ

Ձեր իրագործելիք նպատակներուն մասին մի՛ պատմէք ուրիշներուն: Մտածուած կերպով գնումներ կատարեցէ՛ք եւ առողջ սննդականոնի հետեւեցէ՛ք:



Կոյս

Բարեկամներու հետ վիճած ատեն ջանացէ՛ք շուտով ձեր կապերը չխզել, այլ հարթեցէ՛ք խնդիրները: Ընկճուածութիւնը յաղթահարելու համար մասնագետներու կարծիքին դիմեցէ՛ք:



Կշիռք

Ձեր աշխատասիրութիւնը առատօրէն պիտի գնահատուի: Յաճախ գբօսնեցէ՛ք եւ մարզանքի հետեւեցէ՛ք, որպէսզի հիւանդութիւններու վտանգէն ձեր բազաւորէք:



Կարիճ

Դուք միշտ կը պայքարիք ձեր նպատակներուն իրագործման համար: Չգուշացէ՛ք խաբէբայ մարդոց առաջարկներէն եւ շարունակեցէ՛ք ձեր ընթացքը յաջողութիւններուն հասնելու համար:



Աղեղնաւոր

Անծանօթ մարդոցմէ ստացած տեղեկութիւնները ուշադրութեամբ ստուգեցէ՛ք: Պարբերաբար բժիշկին այցելեցէ՛ք՝ լուրջ խնդիրներ խուսափելու համար:



Այծեղջիւր

Ձեր աշխատանքին ոլորտը փոխելու ծրագիր մը ունիք, որ յետագայ յաջողութիւններու հիմքը պիտի դառնայ: Ծամբորդութեան համար ալ բարեկատու շրջան է:



Ձրիս

Ամէն ինչ որ ծրագրած էք պիտի յաջողի այս շաբաթ: Անիրաժեշտ է, որ քիչ մըն ալ ձեր սննդակարգին հոգ տանիք, որպէսզի խնդիրներ չյառաջանան:



Ձուկ

Բոլոր ոլորտներուն մէջ ալ ընդլայնեցէ՛ք հորիզոնները, որովհետեւ ձեր վճռականութեան շնորհիւ պիտի յաջողիք: Մեծ յաջողութիւններ պիտի ունենաք եւ իսկական սէր վայելէք:



ԱՇԽԱՏՈՂ ՄԱՅՐԵՐԸ ԿԸ ԹԵՐԱՆԱՄՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԵՆՑ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

21-րդ դարուն կնոջ աշխատանք ունենալը արդէն սովորական երեւոյթ դարձած է: Սակայն եթէ կինը ունի ընտանիք, գաւակներ եւ համապատասխան պարտականութիւններ, արդեօ՞ք ճիշդ է, որ աշխատի, կարելոր պաշտօններ ստանձնէ եւ աշխատանքի վայրին մէջ անցընէ օրուան մեծ մասը:

Թերեւս իւրաքանչիւր անձ այս հարցումներուն տարբեր պատասխաններ տայ, քանի որ մարդիկ տարբեր են, իւրաքանչիւր ընտանիք՝ իւրայատուկ է, մօտեցումները՝ նոյնպէս:

Վերջերս Գարուշրտի համալսարանը հետաքննողական հետազօտութիւն մը կատարած է, ըստ որուն աշխատող մայրերու գաւակները աւելի մեծ կարելիութիւններ ունին յաջողութիւններու հասնելու, մանաւանդ, իգական սեռի ներկայացուցիչները, որոնց մայրերը աշխատանքի անցած են նախքան իրենց դուստրին 14 տարիքը ամբողջացնելը: Այս հարցումին մասնակցած են 18-էն 60 տարեկան տարիքային խումբի 50.000-էն աւելի անհատներ, աւելի քան 25 ազգութեան պատկանող:

Ուստի քանի մը խորհուրդ այս ուսումնասիրութեան լոյսին տակ.

1- Ձեր փոքրիկին հետ շատ ժամանակ անցուցէ՛ք: Յիշեցէ՛ք, որ երբեք չէք կրնար վերադարձնել այն պահերը, գործ 1-1,5 տարի անցուցած կ'ըլլաք ձեր մանուկին հետ, տան մէջ:

2-Կարելիութեան պարագային ընտրեցէ՛ք կէսօրեայ կամ ազատ աշխատանք: Այսպիսով, օրուան մէկ կէսը անցընելով աշխատավայրին, միւս կէսը՝ ձեր ընտանիքին ու գաւակին հետ:

3-Եթէ պարտաւոր եք լրիւ ժամով աշխատիլ, դիմեցէ՛ք որեւէ անհատի օգնութեան, որպէսզի գէթ ձեր կենցաղային գործերը կատարէ ու դուք պարպուիք ձեր գաւակին հետ ժամանակ անցընելու:

4-Եթէ ձեր ընկերութիւնը աշխատող մայրերուն համար աւելի կարճ աշխատանքային ժամ սահմանած է, անպայման օգտուեցէ՛ք այդ դրութենէն: Յիշեցէ՛ք, որ գործը երբեք չի վերջանար, իսկ ձեր փոքրիկը տունը անհամբեր ձեզի կը սպասէ:



5-Աշխատանքէն դուրս ձեր ժամերը օգտագործեցէ՛ք խելամտութեամբ: Եթէ կը փափաքիք ձեր մանուկին հետ երկար ժամանակ անցընել, պետք է ընտրեք ժամանակի այնպիսի ձեւեր, որոնց կը մասնակցի նաեւ փոքրիկը: Ժամանակը նոյնպէս պետք է օգտագործել շատ արդիւնաւետ կերպով. Գրաժարիլ պետք է այնպիսի գործեր կամ հանդիպումներ, որոնք ժամանակի վատնում կը համարուին:

6- Ժամանակ տրամադրեցէ՛ք հանգստանալու: Շատ կարելոր բան է ասիկա, որ յաճախ շատերս մոռացութեան կու տանք: Ամբողջովին նուիրուելով աշխատանքին, իսկ երեկոյեան ընտանեկան պարտականութիւններուն՝ կանայք յաճախ կը մոռնան իրենք զիրենք: Այս երեւոյթը, շատ երկար ժամանակի վրայ, անհետեւանք չի կրնար մնալ: Գերյոգնածութիւնը յաճախ մայրերուն անբաժան ընկերն է, սակայն եւ թշնամին, քանի որ յոգնածութիւնը ընկճախտի կրնայ առաջնորդել, ջղային կրնայ դարձնել ձեզ, բնականաբար բացասաբար ազդելով ձեր գաւակին վրայ:

7- Եթէ նկատեք, որ աշխատանքին պատճառով ձեր գաւակները կը տուժեն, մի՛ անտեսեք այս երեւոյթը: Յարգելի են այն կանայք, որոնք ժամանակաւորապէս կը հրաժարին իրենց աշխատանքէն ու գաւակներու դաստիարակութեամբ կը զբաղին: Լաւ կշռադատել է տեք որոշում գոյացուցէ՛ք եւ երբեք մի՛ վախճաք ձեր գաւակները մեծցնելէ տեք աշխատանքի վերադառնալէ:

Յիշեցէ՛ք, եթէ փափաք ունիք, միշտ կրնաք վերականգնել ձեր հմտութիւններն ու գիտելիքները:

Մի՛ մոռնաք, որ կնոջ առաքելութիւնը երջանիկ գաւակներ դաստիարակելն է նաեւ: Ուստի համարեցէ՛ք ձեր աշխատանքն ու գաւակին նկատմամբ ձեր պարտաւորութիւնները, որպէսզի գտնեք այս երկուքին հաւասարակշռութիւնը եւ դուք ձեզ չզրկեք ո՛չ աշխատանքէ, ո՛չ մայրական գուրգուրանք ջամբելէ:

Աշխատող մայրը յաճախ աւելի կարելիութիւններ կրնայ ստեղծել եւ իր ընտանիքին, եւ գաւակներուն համար:

Մարզական



Ռաֆֆի Սիկատեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Սուրիոյ Պասքեթի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան առաջին հանդիպումին, ՅՄԸՄ-ի կազմը 73 - 69 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ ՅԵԸ-էն:



- Սուրիոյ պասքեթի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան 5-րդ փուլի մրցումներու ծիրին մէջ, Յալէպի Ահլի 66 - 61 արդիւնքով յաղթեց ՃԵՂԻՆ, իսկ Յոմսի մէջ Ուահտէն 74-72 արդիւնքով պարտութեան մատնեց հիւրընկալ Քարամէն: Յալէպի ճաւառը պարտութիւն մը եւս արձանագրելով 52-46 արդիւնքով զիջեցաւ Նաուահիրին:

- Սուրիոյ Պասքեթի Դաշնութիւնը, Ալ-պասամա ընկերութեան հետ առաջարկած է Դամասկոսի մէջ կազմակերպել արաբական ակումբներու մրցաշարքը:

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ

ՄԱՆԶԵՍԹԵՐԻ ԶԼԱՍԻԸ

ՍՄԱՐՏԻՆ ԶԱՍԱԲ Ի ՆՊԱՍՏ ԻՆԱՅԹԸՏԻՆ

Անգլիոյ առաջնութեան 20-րդ փուլի մրցումներուն, ախոյեան Մանչեսթըր Սիթին «Օլտ Տրաֆորտ» մարզադաշտին մէջ 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ Մանչեսթըր Ինթաճըրնէն: Հանդիպումի առաջին կիսախաղը ակարտեցաւ հաւասար արդիւնքով: Կազմերը երկրորդ կիսախաղին խտացնելով իրենց յարձակումները կրցան վտանգի ենթարկել դարպասները: 60-րդ վայրկեանին, Սիթիի կիսապաշտպան Քելվըն Տէ Պրոյնէն գնդակը ստացաւ, Գրիլիշը նշանակեց կազմին միակ կողմը, որմէ ետք 78-րդ վայրկեանին հաւասարութեան կողմը նշանակեց փորթուկալցի խաղացող Պրուսո Ֆերնանտէսը: 5 վայրկեան անց, հոլանտացի Էրիկ Տէն Զաքիի գլխաւորած խումբի յաղթանակի կողմը նշանակեց անգլիացի յարձակող Մարքոս Անշֆորտը:



ՊԱՐՏԵԼՈՆԱ ՍՊԱՆԻՈՅ ՍՈՒՓԸՐ ԳԱՄԹԻՆ ՏԻՐԱՅԱՄ

Կիրակի երեկոյեան, Սեուտական Արաբիոյ Ռիատ Զադաբին մէջ տեղի ունեցաւ Սպանիոյ սուփըր գաւաթի ակարտական մրցումը, որուն ակարտին Պարսելոնան 3 - 1 արդիւնքով կրցաւ պարտութեան մատնել մայրաքաղաքի Ռեալ Մատրիտը եւ տիրանալ բաժակին: 33-րդ վայրկեանին, սպանացի կիսապաշտպան Կալին, որ վերջերս ընտրուած էր տարուան լաւագոյն երիտասարդ խաղացողը, նշանակեց քաթալոնեական ակումբին առաջին կողմը, որմէ տասը վայրկեան ետք լեծ մարզիկ Լեվանտովսկին Կալիյէն ստանձնած գնդակով կրկնապատկեց արդիւնքը: Սոյն կիսախաղին Ռեալը միայն մէկ անգամ կրցաւ վտանգի ենթարկել Պարսելոնայի դարպասը: Երկրորդ կիսախաղը ընթացաւ Նոյն կերպով: Կալին անգամ մը եւս յաջող գնդակի փոխանցում մը կատարեց ու Բետրին նշանակեց երրորդ կողմը: Արքայական ակումբի ֆրանսացի յարձակող Զարիմ Պենգեման հանդիպումի յաւելեալ ժամուն արձանագրեց կազմին միակ կողմը եւ հանդիպումը ակարտին հասաւ 3 - 1 արդիւնքով: Նշենք որ այս 14-րդ անգամն է որ Պարսելոնան ձեռք կը ձգէ Սպանիոյ սուփըր գաւաթը, մինչդէռ Ռեալ մնաց 12 բաժակով:



Կերպով: Կալին անգամ մը եւս յաջող գնդակի փոխանցում մը կատարեց ու Բետրին նշանակեց երրորդ կողմը: Արքայական ակումբի ֆրանսացի յարձակող Զարիմ Պենգեման հանդիպումի յաւելեալ ժամուն արձանագրեց կազմին միակ կողմը եւ հանդիպումը ակարտին հասաւ 3 - 1 արդիւնքով: Նշենք որ այս 14-րդ անգամն է որ Պարսելոնան ձեռք կը ձգէ Սպանիոյ սուփըր գաւաթը, մինչդէռ Ռեալ մնաց 12 բաժակով:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 423)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

| | | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | | | | | | | | ■ | | | | |
| 2 | | | | ■ | | | ■ | | ■ | | | |
| 3 | | | ■ | | | | | | | | | |
| 4 | | | | | ■ | | | | | | | |
| 5 | | | ■ | | | ■ | | | ■ | | ■ | |
| 6 | | ■ | | | | | | | | | | |
| 7 | | | | | | | | | | | | |
| 8 | ■ | | | ■ | | ■ | | ■ | | | | |
| 9 | | ■ | | | | | | | | | | |
| 10 | | | | | ■ | | | | | | | |
| 11 | | | ■ | | | | | | | | ■ | |
| 12 | | | | | | | ■ | | | | | ■ |

Հորիզոնական

- Անապատի մէջ ուղեւորներու խումբ: Հունտ ծեծելու փոս աման:
- Արական անուն: Տարածքի միաւոր: Տառի մը անունը:
- Հակառակ՝ յոգնակերտ մասնիկ: Ծուխը դուրս տուող անցք: Անձնական դերանուն:

Անձնական դերանուն:

- Դրոշմ: Կանաչութիւն, մարգ:
- Ձայնաւոր տառեր: 301:
- Յորդորել: Գոյութիւն ունին:
- Հայ Առաքելական եկեղեցւոյ հինգ Տերունի տօները այդպէս կը կոչուին: 301:

Կը կոչուին: 301:

- Բաղաձայն տառեր: Հակառակ՝ քէն: Շաղկապ:
- Ամուսինը մահացած կին: 7400:
- Արգելական: Արցախեան ազատամարտի հերոս, ֆիտայի Վարդան Ստեփանեանի ծածկանունը:
- Կրկնուած ձայնաւորներ:
- Վայրի աղաւնի: Ս. Աստուածածնայ մայրը:

Ստեփանեանի ծածկանունը:

Ուղղահայեաց

- Օղին մէջ սառած անձրեւ: Մտերիմ:
- Իգական անուն: Հանքային համեմ:
- Հակառակ՝ տարածքի միաւոր: Հաւատարիմ, պարկեշտ:
- Հակառակ՝ 9050: Հակառակ՝ տարածքի միաւոր: Տառի մը անունը:
- Հակառակ՝ արուամազ: Մութ: Ձայնանիշ:
- Հայ նահապետ: Լեզուով մը՝ այր: Հակառակ՝ կողմ:
- Գուսան Հայկազունի կողմէ գրուած հայրենասիրական երգ. «.....», միացէ՛ք»: Յարաբերական դերանուն:
- Եղնիկ:
- Հակառակ՝ տառի մը հարեանները: Ծաղիկի տեսակ:
- Պատշաճ: Պէս:
- Սերգէյ Փարաջանովի նշանաւոր ֆիլմը. «..... Գոյնը»:
- Հաստատական պատասխան:
- Ձիւր բերնին երկաթը:

Հաստատական պատասխան:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 422)

| | | | | | | | | | | | | |
|----|----|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | ժ | խ | տ | ն | ւ | մ | | լ | ե | ա | ր | դ |
| 2 | ն | ր | դ | ն | շ | | յ | լ | ի | ա | | |
| 3 | ւ | ն | ն | լ | ն | ք | ա | կ | ս | ք | | |
| 4 | ո | խ | ք | հ | ւ | ո | ն | խ | ա | | | |
| 5 | ա | ի | կ | | շ | ա | մ | ք | ա | ն | | |
| 6 | այ | | ե | պ | | ե | ա | ս | ա | ո | ա | |
| 7 | ե | | լ | ի | մ | | մ | մ | կ | | | |
| 8 | տ | է | գ | ք | ա | ն | ն | ա | ա | | | |
| 9 | ք | ե | ն | ա | կ | ա | ն | ա | տ | ե | լ | |
| 10 | ն | | ր | կ | կ | | | ք | | | | |
| 11 | ս | տ | ե | փ | ա | ն | ա | կ | ե | ք | տ | |
| 12 | ց | մ | ա | հ | ք | ա | է | | | | | |

ԼՈՒՐԵՐ

| | | | | | | |
|--|---|--|---|---|--|--|
| Երևուեցում 23/1 6° 14° | Երեքշաբթի 24/1 2° 16° | Չորեքշաբթի 25/1 3° 12° | Հինգշաբթի 26/1 4° 11° | Ուրբաթ 27/1 6° 6° | Շաբաթ 28/1 3° 7° | Կիրակի 29/1 3° 12° |
|--|---|--|---|---|--|--|

ԸՆԿՅ. ԱՐՓԻ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ՝ ՎԱՍՏԱԿԱԽՈՐ ՄԱՆԿԱՎԱՐԺՆ ՈՒ ԺՐԱԶԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆԸ

Արփի Արսլանեան-Սապունճեան ծնած է 28 Դեկտ. 1935-ին Յալէպ-Սուրիա, Երրորդ գաւաակն է Տեղասպանութենէն փրկուած՝ մալաթիացի Սիմոն Արսլանեանին եւ արաբկիրցի Լուսիա Վարժապետեանին: Յաճախած է Ազգային Յայկազեան վարժարան, որմէ ետք Զարէն Եփփէ Ազգային Ճեմարան ու դարձած անոր գիտական բաժնի Գ. Յունճի շրջանաւարտներէն 1954-



1955 կրթական տարեշրջանին, տնօրէնութեամբ՝ Միլաս Թեօլէեանի: Ամալերջի հանդէսին արտասանած է շրջանաւարտներուն ուղերձը եւ վկայուած Տ. Չարեհ Եպս. Փայասեանի ձեռամբ: Ճեմարանը անարտելէ ետք մեկնած է Լիբանան իր բարձրագոյն կրթութիւնը շարունակելու Պէյրութի Ecole Supérieure des Lettres-ի մէջ, հետեւելով մանկավարժութեան մասնագիտութեան:

1956-ին անդամակցած է Սուրիահայ Օգնութեան Կազմին:

Ուսումնառութեան շրջանը յաջողութեամբ անարտելէ եւ Յամազգայինի Պէյրութի Ճեմարանի մանկապարտէզէն ներս մասնագիտական փորձառութիւն ձեռք ձգելէ ետք, վերադարձած է Յալէպ եւ անմիջապէս ստանձնած Ազգային Յայկազեան Մանկապարտէզի մանկապարտիզ պատուհիի պաշտօնը, որ վարած է ամբողջ 42 տարի, 1958-էն մինչեւ 2000 թուական:

Լիբանան գտնուած միջոցին, Սիմոն Վրացեանի կնքահայրութեամբ տուած է Դաշնակցականի իր երդումը, եւ անցած է Յայ Յեղափոխական Դաշնակցութեան շարքերը, դառնալով սուրիահայ առաջին երդուեալ դաշնակցական ընկերուհին:

1960-ին մանկավարժական հմտութիւններու կատարելագործման յաւելեալ ծրագիրներու հետեւած է Սկոթլանդի University of Edinburgh-ի Moray House College of Education-ի եւ Aberdeen College of Education-ի մէջ:

1962- 1965 թուականներուն շարունակելով իր կամաւոր գործունէութիւնը Սուրիահայ Օգնութեան Կազմի շարքերէն ներս, մաս կը կազմէ նաեւ տեղւոյն Յամազգայինի Վարչութեան: Այդ տարիներուն անդամ եղած է նաեւ ՍՕԽ-ի Արծուկ Խորհուրդին:

1965-ին կ'ընտրուի ՍՕ Կազմի պետական վարչութեան անդամ եւ այնուհետեւ Շրջանային Վարչութեան անդամ, ուր կը ստանձնէ փոխատենապետի պաշտօնը:

1966-ին կ'ամուսնանայ համազգայնական ու կուսակցական իր ընկերոջ՝ Չաւեն Սապունճեանի հետ:

Յաջորդող տարիներուն ընկի. Արփի մաս կը կազմէ ՍՕԽ-ի իրերայաջորդ վարչութիւններու, եւ 1977-ին առաջին անգամ ըլլալով կը ստանձնէ ՍՕԽ-ի Շրջանային Վարչութեան ատենապետի պաշտօնը, որ կը շարունակէ վարել երկար տարիներ:

1983-ին առաջին անգամ ըլլալով կը ներկայացնէ Սուրիահայ Օգնութեան Կազմի ՅՕՄ-ի հա-

մահայկական 61-րդ Պատգամաւորական Ժողովին, Փարիզ, այնուհետեւ 1986-ին 62-րդ պատգամաւորական Ժողովին, Միացեալ Նահանգներ:

1988-ին ՍՕ Կազմի Մայրերու Օրուան տարեկան տօնակատարութեան ընկի. Արփի կը պարգեւատրուի միութեան «Կանթեղ» շքանշանով:

1992-ին Երեւանի մէջ կը մասնակցի ՅՕՄ-ի համահայկական 64-րդ պատգամաւորական Ժողովին, դարձեալ ներկայացնելով ՍՕ Կազմի Շրջանային Վարչութիւնը:

Նոյն տարին կ'ընտրուի Բերիոյ Թեմի Ազգային Գաւառական Ժողովի անդամ, պաշտօն մը որ կը վարէ մինչեւ 2013:

1993-ին, իր 35 տարուան կրթական ծառայութեան համար կը պարգեւատրուի «Ազգային Յայկազեան Վարժարանի» շքանշանով:

1995-ին Լոս Անճելըսի մէջ գումարած ՅՕՄ-ի պատգամաւորական 65-րդ Ժողովին, Սուրիան առաջին անգամ ըլլալով կ'ունենայ իր ներկայացուցիչը ՅՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան կազմին մէջ, յանձին ընկի. Արփի Սապունճեանի, որ իր բացակայութեան կ'ընտրուի Կեդրոնական Վարչութեան անդամ:

1996-ին Արփի Սապունճեան իր բազմամեայ կրթական ծառայութեան ու հասարակական գործունէութեան համար ՆՍՕՏՏ Արամ Ա Վեհափառ Յայրապետի ձեռամբ կը պարգեւատրուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

1998-ին եւ 2001-ին յաջորդաբար կը մասնակցի ՅՕՄ-ի Պատգամաւորական համահայկական 66-րդ եւ 67-րդ Ժողովներուն, Նիւ Ճըրզիի եւ Աթենքի մէջ, իսկ 2004-ին՝ ուղեկից միութիւններու եւ ՅՕՄ-ի Միջին Արեւելքի խորհրդատուներուն, Պէյրութ:

2005-ին կը մասնակցի ՅՕՄ-ի 100-ամեակի Զինադարմի հիմնադիր Ժողովին Նիկոսիոյ մէջ, Կիպրոս եւ այնուհետեւ կը գլխաւորէ ՍՕ Կազմի դրամահաւաքի յանձնախումբը:

2010-ին ՍՕ Կազմի 90-ամեակին առիթով կ'արժանանայ ՅՕՄ-ի 50 եւ ամէլի տարիներու ծառայութեան «Պատուոյ Գնահատագիր»-ին, որպէս անձնուրաց ՅՕՄ-ուհի:



2011-ին կը պարգեւատրուի Յայաստանի Գերագոյն Մարմնի Ազատամարտիկներու Յանձնախումբի «Մայրական Երախտագիտութեան» մետալով, առ ի գնահատանք Արցախի մէջ կատարած իր ծառայութիւններուն:

ՍՕ Կազմի Շրջանային Վարչութեան բազմավաստակ ատենապետուհի ընկի. Արփի Սապունճեանի միութենական ու հասարակական գործունէութեան տարիներուն հալէպահայ գաղութն ու յատկապէս Սուրիահայ Օգնութեան Կազմը ապրեցաւ ակներեւ վերելք: 1983-ին, երբ որոշուեցաւ կառուցել ՍՕ Կազմի ընկերաբժշկական կեդրոնը, ընկի. Արփին ստանձնեց այդ պատասխանատու գործը ղեկավարելու պարտականութիւնը: Իր խաչուհի ընկերուհիներուն եւ անոնց գործին հաւատարմութեամբ ազգային բարերարներու գոհողութեան, յարատեւ աշխատանքին եւ անձնուիրութեան շնորհիւ, այդ կեդրոնը իրականութիւն դարձաւ, կենսի կոչուեցաւ ու իրերայա-

ջորդ տարիներու ընթացքին բարգաւաճեցաւ եւ զարգացաւ: Կեդրոնի դարմանատնային զանազան բաժանմունքները (ատամնաբուժական, ակնաբուժական, կանացի եւ այլ) արդիական սարքաւորումներով օժտուելէ ետք, ընկի. Արփի հալէպահայ կարիքաւոր կանանց հայեցի ապահով միջավայրի մէջ գործի առիթ ստեղծելու նպատակով, յղացաւ գաղափարը ընկերաբժշկական կեդ-



րոնի ներքնայարկը վերածելու կարի աշխատանոցի, որ շատ արագ դարձաւ միութեան եկամտաբեր ձեռնարկութիւն:

Ընկի. Արփիի մշտական ու մայրական հոգածութեան ներքոյ մնացին Ազգային Պատասպարանն ու իր կատարած երեխաները, միշտ նախանձախնդիր ըլլալով անոնց հայեցի դաստիարակութեան ու բարօր կենսի ապահովման:

Միշտ հաւատալով հայ կնոջ ներուժին, եւ սուրիահայ համայնքէն ներս անոր կենսական դերակատարութեան, ընկի. Արփի գարկ տուաւ ՍՕ Կազմի անդամահաւաքին, ու հետամուտ եղաւ ՍՕ Կազմի շարքերը համարելու երիտասարդ ու համալսարանաւարտ անդամներով, անոնց գործունէութեան նոր դաշտեր ստեղծելով: Ան մղեց հայ կինը, որ իր տան պարտականութիւններուն կողքին հարստացնէ իր գիտելիքները, կազմակերպեց լեզուի, համակարգիչի գործածութեան, եւ այլ դասընթացքներ, հզօրացնելու անոր կարողութիւնները:

Ազգ. Յայկազեան վարժարանի որպէս մանկապարտիզ պանուհի իր պաշտօնավարութեան տարիներուն, իր կրթական գործունէութեան ճամբով նաեւ ջանաց կտորել կարծրատիպերը եւ համոզել այդ մարդոց, որ գործունէաց կինը միշտ լաւ մայր է, իսկ կինը կարողականութեան ամրապնդումը կը նպաստէ նաեւ հաստատուն հիմքերով ընտանիքի ստեղծման:

ՍՕ Կազմն ու Ազգային Յայկազեան Մանկապարտէզը իր ամբօրեայ գործունէութեան դաշտերը ըլլալու զուգահեռ, Յայաստանն ու սփիւռքահայութեան զանազան հարցերը միշտ մնացին ընկի. Արփիի ուշադրութեան կեդրոնը: 1988-ի Սպիտակի տարերային երկրաշարժի ու այնուհետեւ Արցախեան առաջին պատերազմի օրերուն, համահայկական զօրակցական արշաւին մէջ մեծ դեր ունեցաւ Արփի Սապունճեան, ՍՕ Կազմի իր ընկերուհիներուն հետ միասին, կազմակերպելով օժանդակութեան հետեւողական արշաւներ: Յայաստանի մութ ու ցուրտ տարիներուն, նոյն յանձնառութեամբ, երբ սուրիահայ գաղութը կը հիւրընկալէր Յայաստանէն ժամանած արուեստագետներ, գեղարուեստի խումբեր, հանրային անձնաւորութիւններ եւ անհատներ, ընկի.